ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ

Հասցե՝ ՀՀ, Սյունիքի մարզ,ք.Կապան Շահումյան 20/32, 3301:
Հեռ. (+374 285)5 25 63
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1200: գինը՝ 100 դրամ

ISSN 1829-3468

Ափսոս ենք՝ որ ... չենք հավատում միմյանց ու ինքներս մեզ:

Հրանտ Մաթեւոսյան

ՇՈՐԵՔՇԱԲԹԻ, 4 ՀՈՒԼԻՍԻ 2018Թ.
№ 17 (475)

Սյունյաց երկիր

www.syuniacyerkir.am

Հուլիսի 7-ին՝ Գորիսը՝ 2018թ. ԱՊՀ մշակութային մայրաքաղաք ծրագրի բացում- փիփղոսի փոխանցում

Գորիսը, որպես Անկախ պետությունների համագործակցության մշակութային մայրաքաղաք, դռները կբացի բազմաթիվ հյուրերի առջեւ. թատերական, գրական- երաժշտական մի շարք մշակութային միջոցառումներով:

Քաղաքն այժմ ակտիվորեն նախապատրաստվում է առաջիկա միջոցառումներին՝ պլանավորվում են բազմաթիվ միջոցառումներ, բարեկարգվում փողոցները, գեղեցիկ տեսքի են բերվում հանրային վայրերը:

Նախատեսվող միջոցառումների ծրագիրը՝ 8-րդ էջում:

Մշակութային քաղաք Գորիսը մշակութային ժառանգությունը վերականգնելու եւս մեկ հնարավորություն բաց թողեց

Ինչպես արդեն տեղեկացվել է, Գորիս քաղաքը հայտարարվել է 2018 թ. ԱՊՀ մշակութային մայրաքաղաք: 2013թ. ԱՊՀ մշակութային մայրաքաղաք ճանաչվեց Գյումրին, հինգ տարվա ընդմիջումից հետո Հայաստանը հնարավորություն ունի եւս մեկ ինքնատիպ եւ ավանդույթներով հարուստ քաղաք ներկայացնելու միջազգային հանրությանը: Գորիսի ընտրությունը պայմանավորված է եղել քաղաքի հարուստ պատմամշակութային ժառանգությամբ: Կառավարության 2002թ. հաստատած Գորիս քաղաքի պատմության եւ մշակույթի հուշարձանների ցանկում ներառված է 278 հուշարձան (157 միավոր):

Մշակութային մայրաքաղաքի կարգավիճակը մեկ տարով հնարավորություն է տալիս այդ քաղաքին վերածվելու մշակութային կենտրոնի: Մշակույթի նախարարությունը 2018թ. համար պլանավորած միջոցառումներն այս տարի կենտրոնացնելու է Գորիսում: Նախարարությունը եւ Գորիս համայնքը համատեղ ավելի քան 50 միջոցառում են նախատեսել՝ երաժշտական, թատերական, հրատարակչական, հոբելյանական եւ գեղարվեստական այլ ծրագրեր: Միջոցառումները կմեկնարկեն գարնանից, իսկ հուլիսի 7-ին տեղի կունենա բացումը, որի ժամանակ ԱՊՀ գործադիր կոմիտեն Գորիսին կփոխանցի «մշակութային մայրաքաղաք» տիտղոսը:

«Մոտ 250 հրավիրվածներ կլինեն ԱՊՀ երկրներից, Վրաստանից, Չինաստանից, Իրանից, Մերձբալթյան երկրներից»,- տեղեկացնում է մշակույթի նախարարության արտաքին կապերի վարչության պետ Լուսինե Քարամյանը:

Բացման երկօրյա տոնակատարություններին ժամանակ համերգային ծրագրով հանդես կգա ԱՊՀ նվագախումբը՝ նոր կազմով, կոմպոզիտոր Կոնստանտին Օրբելյանի 90-ամյակին նվիրված ջազային փառատոնը նույնպես կանցկացվի Գորիսում, կլինեն նաեւ բացօթյա կինոդիտումներ,

էջ 8

Ինչո՞ւ են թաքցնում «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» բարեգործական հիմնադրամի երկու տարվա հաշվետվությունը

Քաջարանի կոմբինատի՝ ինչ-որ հիմնադրամների հետ ունեցած առնչությունների ուսումնասիրումն հանրային մեծ նշանակություն ունեցող հարց է, քանզի խոսքը, երեք-չորս տարվա կտրվածքով, մի քանի միլիարդ դրամի մասին է:

Չէ, չենք ասում, որ դա ապօրինի շրջանառություն է: Պարզապես ուզում ենք ճշտել, թե Սյունիքի ընդերքի հաշվին ստացված միլիարդավոր դրամները Միեր Պոլոսկովը, Վահե Հակոբյանը, Նարեկ Ամբարյանը եւ Զարուհի Տոնապետյանն ի՞նչ նպատակով են ծախսել…

Սյունիքի զարգացման եւ ներդրումների հիմնադրամի մասին արդեն տեղյակ ենք պահել հայ հանրությանը՝ ակնկալելով պատկան մարմինների աջակցությունը՝ վերծանելու այդ հիմնադրամի ֆինանսական գործունեության հետ կապված հանելուկները:

Սակայն ավազակախմբի օրերում Սյունիքում հորինվել է մեկ այլ հիմնադրամ եւս՝ «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» բարեգործական հիմնադրամը:

Այդ հիմնադրամը հիմնադրել է Քաջարանի պղնձամոլիբդենային կոմբինատը:

Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահը Վահե Հակոբյանն էր եւ է:

Հիմնադրամի տնօրենը Զարուհի Տոնապետյանն էր եւ է:

Անշուշտ, հիմնադրամ ստեղծելու մեջ որեւէ վատ բան չկա, մանավանդ որ ոլորտը կարգավորվում է «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքով:

Որեւէ վատ բան չկա նաեւ այն բանում, որ Քաջարանի կոմբինատը ստեղծել է «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» բարեգործական հիմնադրամը:

Ուստի եւ փորձեցինք ճշտել, թե ինչով է զբաղվել այդ հիմնադրամն իր գործունեության ընթացքում, սակայն…

«Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի համաձայն յուրաքանչյուր տարի հաշվետու տարվան հաջորդող մարտի 25-ից ոչ ուշ հիմնադրամը www.azdarar.am հասցեում գտնվող ՀՀ հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում պարտավոր է հրապարակել հաշվետվություն իր գործունեության մասին: Հաշվետվությունը պետք է պարունակի տեղեկություններ իրականացված ծրագրերի, ֆինանսավորման աղբյուրների, ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափի եւ դրանցում կանոնադրական նպատակների իրագործմանն ուղղված ծախսերի չափի, հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամների, կառավարչի եւ հիմնադրամի աշխատակազմում ընդգրկված անձանց անուններն ու ազգանունները, եթե նրանք օգտվել են հիմնադրամի միջոցներից եւ ծառայություններից հաշվետու տարվա ընթացքում:

Չնայած օրենքի այդ հստակ պահանջին՝ «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» բարեգործական հիմնադրամը չի հրապարակել 2015 եւ 2017 թվականների հաշվետվությունը:

էջ 4

ՀՀ ԳԱԱ-ում անցկացվեց արեւելագետ-հայագետ Կարապետ Մելիք-Օհանջանյանի 125-ամյակին նվիրված գիտաժողով

Սույն թվականի հունիսի 26-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում մեկնարկեց ականավոր արեւելագետ-հայագետ, ՀԽՍՀ ԳԱԱ ակադեմիկոս Կարապետ Մելիք-Օհանջանյանի 125-ամյակին նվիրված երկօրյա գիտաժողովը:

Ողջույնի խոսքով հանդես եկան ՀՀ ԳԱԱ հայագիտության եւ հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Յուրի Սուվարյանը, ՀՀ ԳԱԱ Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի տնօրեն, ԳԱԱ թղթակից անդամ Պավել Ավետիսյանը: ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Սարգիս Հարությունյանը ներկայացրեց Գերմանական էսքիզներ՝ հուշեր Կարապետ Մելիք-Օհանջանյանի մասին: Բանասիրական գիտությունների դոկտոր Վերժինե Սվազլյանը ներկայացրեց ակադեմիկոս Կարապետ Մելիք-Օհանջանյանի կյանքն ու գիտական գործունեությունը:

Գիտաժողովի մասնակիցներն ավելի քան 25 զեկուցումներով ներկայացրեցին Կարապետ Մելիք-Օհանջանյանի գիտական գործունեությունը՝ էպոսագիտության, համեմատական առասպելաբանության, հայ-իրանական մշակութային առնչությունների, միջնադարի գրականագիտության, բանագիտության, համեմատական տեքստաբանության վերաբերյալ:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն

Հայագետի համար մի կյանքը քիչ է...

Մեղրու երեւելի զավակներից է բանասեր, հայագետ-արեւելագետ, թարգմանիչ, ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ, ակադեմիկոս Կարապետ Մելիք-Օհանջանյանը: Նա խտացումն է նաեւ այն անձնավորությունների, ովքեր նախորդ դարը (19-րդ) տարել, կապել են հաջորդ (20-րդ) դարի հետ: Կ.Մելիք-Օհանջանյանը նաեւ ապրել է ստալինյան հալածանքների դաժան շրջանը: 1937թ. չարաբաստիկ տարում բռնադատվել է ու հինգ տարի անցկացրել սիբիրյան աքսորում: Սակայն 1930-ականների հալածանքները չկոտրեցին նրա ոգին, ու նա շարունակեց զբաղվել գիտական գործունեությամբ: Հետազոտողի գիտական նախասիրությունները բազմազան էին եւ բազմաբնույթ՝ ժողովրդական բանահյուսություն, հայ հին գրականություն, հայոց պատմություն, արեւելագիտություն, համեմատական տեքստաբանություն, գիտական եւ գրական հուշարձանների թարգմանություն:

Մեղրու Կալեր գյուղում 1893 թվականի փետրվարի 20-ին ծնված ազնվական տոհմի ժառանգ Կարապետը նախնական կրթությունը ստացել է Գանձակի տղայոց գիմնազիայում: 1913-ին ընդունվել է Մոսկվայի Լազարյան ճեմարանը, որն, իրավամբ, մեծարվել է «Մայր դպրանոց», «Սերմնարան հայոց դպրոցաց» պատվանուններով: Այդտեղ դասավանդել են նշանավոր հայագետներ ու օտարազգի գիտնականներ: Կրթարան, որ իր պատերի մեջ տակավին պահում էր Վահան Տերյանի եւ հայոց այլ մեծերի շունչը: 1914թ. էր, առաջին աշխարհամարտի թոհուբոհի սկիզբը: Ճեմարանի պրոֆեսորական խորհրդի որոշմամբ գերազանցիկ ուսանողին գործուղում են Գերմանիա՝ որտեղ նրան դասավանդել են նշանավոր գիտնականներ Յոզեֆ Մարկվարտը, արեւելագետ Յանսենը, եվրոպացի երեւելի այլ գիտնականներ: Գիտության մեջ անդրանիկ քայլերն անող երիտասարդը խորացել է ոչ միայն գերմաներենի, այլեւ հին հնդկերենի՝ սանսկրիտի մեջ:

1915-1917թթ. Կ.Մելիք-Օհանջանյանն ազատ ունկնդիր էր Բեռլինի համալսարանում: Ապագա հայագետն ապրում էր Ավետիք Իսահակյանի տանը: Բեռլինի՝ նրա ապրած ժամանակաշրջանը վավերացված է Ավետիք Իսահակյանի նամակներում՝ հասցեագրված էջմիածնի սինոդի դատախազ Փարսադան Մելիք-Օհանջանյանին՝ ապագա հայագետի հորեղբորը, ում հովանավորությամբ նա սովորում էր արտասահմանում: Պահպանվել են վարպետի նամակները փաստաբանին. ահա որոշ կտորներ. **«Կարապետը համալսարանում դասեր է լսում, ժամանակը զուր չի վատնում»** (1915թ. նոյեմբերի 15-ի նամակից): Դրանից առաջ գրած իր նամակում Իսահակյանը ներկայացնում է երկրում ստեղծված ծանր իրավիճակը. **«Գերմանիայում դրությունն օրեօր վատանում է, թանկ, թանկ, թանկ, ապրելն անկարելի է դառնում, միայն ձեր հայրական խնամքի շնորհիվ է, որ նա (Կարապետ Մելիք-Օհանջանյանը, ծանոթ. խմբ.) պիտի կարողանա այդ դժվարություններից գլուխ հանել»:**

Մեր երկրի համար դժվարին մի ժամանակում (1920թ.) վերադարձավ Հայաստան: Կուտակելով անհրաժեշտ գիտելիքներ, համաշխարհային գրական փորձ՝ կարող էր Եվրոպայի որեւէ համալսարանում պրոֆեսորի պաշտոնով շարունակել իր գործը, բայց նախընտրեց հայրենիքում լինել, ծառայել իր ժողովրդին: Սկզբում աշխատել է հանրային կրթության եւ արվեստի նախարարությունում, ապա՝ Երեւանի տղայոց գիմնազիայում: 1921թ. նշանակվել է հանրապետության առաջին գիտական հիմնարկի՝ էջմիածնի գիտական ինստիտուտի նախագահ: 1921-1930թթ. զբաղվել է մանկավարժական աշխատանքով՝ դասախոսելով Երեւանի պետական համալսարանում եւ մանկավարժական ինստիտուտում:

Կարապետ Մելիք-Օհանջանյանի մանկավարժական գործունեության մասին ուշագրավ փաստեր ենք հայտնաբերում կապանցի մանկավարժ, ՀՀ վաստակավոր ուսուցիչ (այժմ՝ հանգուցյալ) Աղամիր Աղամիրյանի նոթատետրում: Նա գրում է, որ 1922 թվականին առաջին անգամ Ղափանից Մեղրի ուղարկեցին մի խումբ երիտասարդ ուսուցիչներ՝ լուսժողկոմատի կողմից կազմակերպված կուրսերին մասնակցելու համար: Մեկուկես ամիս տեւած այդ դասընթացներում դասավանդում էր նաեւ Կարապետ Մելիք-Օհանջանյանը:

1930-ական թվականներից սկսած՝ Կարո Մելիք-Օհանջանյանը մեծանուն հայագետ Մանուկ Աբեղյանի հետ հաջողությամբ իրականացրել է «Սասնա ծռեր» էպոսի գիտական հրատարակությունը՝ երեք մեծադիր հատոր, որ հայ բանասիրության ծանրակշիռ հիմնաքարն է: Տակավին 1932թ. ալաշկերտցի ասացող Մանուկ Թորոյանից գրի է առել էպոսի մի նոր տարբերակ: Ընդհանուր առմամբ՝ գրի է առել «Սասնա ծռերի» ութ նոր պատում, ռուսերեն է թարգմանել «Սասնա ծռերի» տասը ընտիր պատում՝ ընդարձակ ուսումնասիրությամբ եւ հարուստ ծանոթագրություններով: Ոչ միայն թարգմանել, այլեւ խորացել է «Սասնա ծռեր» էպոսի փիլիսոփայության, մարդկային փոխհարաբերությունների, գրական, գեղարվեստական նկարագրության մեջ:

Միջանկյալ նշենք, որ 2008թ. նրա եղբոր թոռ Վահան Մելիք-Օհանջանյանի ջանքերով լույս տեսավ «Սասնա ծռերի» ինը ընտիր պատում՝ տարբեր բարբառներով եւ զուգահեռ թարգմանությամբ, որը կատարել էր ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Կ.Մելիք-Օհանջանյանը: Հրատարակության մեջ զետեղված են նաեւ Կ.Մելիք-Օհանջանյանի ներածական հոդվածը՝ «Հայ ժողովրդական վիպական բանաստեղծությունը» վերտառությամբ եւ բառարան-ծանոթագրությունները:

Հայագետի գրչին են պատկանում «Ֆիրդուսին եւ Իրանի վիպական մոտիվները «Շահնամեում» եւ հայ մատենագրության մեջ» (Եր. 1934), «Միթրա Միհրը» «Սասնա ծռերի մեջ» (1946), «Էջեր հայ միջնադարյան գեղարվեստական արձակից» (1957), «Կորյունը» եւ նրա «Վարք Մաշտոցին» (ռուս. 1962) եւ այլ ուսումնասիրություններ: Ռուսերեն է թարգմանել Մ.Աբեղյանի «Հայոց հին գրականության պատմության» (1948) առաջին հատորը:

Գերմանիայում հիմնավոր կրթություն ստացած վաստակաշատ գիտնականի յուրաքանչյուր գիտական հոդված, թե մենագրություն ծանրակշիռ խոսք են տվյալ բնագավառում: Հիշենք մեծանուն հայագետի՝ «Ագաթանգեղոսի բանահյուսական աղբյուրների հարցի շուրջ» հոդվածը՝ տպագրված «Պատմաբանասիրական հանդեսում» (1964 N4): Կ.Մելիք-Օհանջանյանը Գանձակեցու «Հայոց պատմություն» աշխատության համահավաք գիտական բնագրի հեղինակն է, որտեղ արտացոլված են նրա գրաբարի փայլուն իմացությունը եւ ընդհանրապես մեր գրականության հմուտ գիտակի կերպարը:

Կիրակոս Գանձակեցու «Պատմություն հայոց» աշխատության գիտապատմական բնագրի հետ մեկտեղ Կ.Մելիք-Օհանջանյանը կազմել է նաեւ 13-րդ դարի նշանավոր պատմիչի աշխատությունների ցանկը: Գանձակեցու աշխատության 1982թ. հրատարակության առաջաբանում պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վարագ Առաքելյանը գրում է. **«Գանձակեցու գրքի փայլուն գնահատականը եւ պատմագիտական արժեքավորումը տվել է ակադեմիկոս Կարո Մելիք-Օհանջանյանը՝ Գանձակեցու երկի հրատարակության առաջաբանում, որը քննական բնագիրը կազմողի լավագույն աշխատություններից մեկն է՝ Գանձակեցուն, նրա երկին, դարաշրջանին վերաբերող հարցերի դրմամբ եւ փայլուն լուծումով»:**

Իր ստեղծած գիտական վաստակի հետ միասին Կարո Մելիք-Օհանջանյանը նաեւ ուսուցիչ էր ու դաստիարակ: 1921-1937թթ. կարդացել է «Հայ հին գրականության պատմություն», «Հայ բանագիտություն» դասընթացները: 1935թ. գիտնականին շնորհվել է պրոֆեսորի կոչում: Եվ միայն 1962թ. արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման:

Ափսոս, որ դաժան ճակատագրի պարտադրմամբ Կարապետ Մելիք-Օհանջանյանն իր կյանքի մի որոշակի շրջանում ստիպված եղավ ժամանակը տրամադրել արդարության հաղթանակը մոտեցնելուն: Եթե չլինեին հալածանքի, անվստահության այդ անլուր ու մութ տարիները, ով գիտե, թե ինչ նոր մենագրություններ, գիտական բնագրեր ու թարգմանություններ կունենայինք Կարապետ Մելիք-Օհանջանյանի հեղինակությամբ: Նա անցավ չարչարանաց մի ճանապարհ, որ ճաշակեցին Գուրգեն Մահարին, Վաղարշակ Նորենցը եւ շատ ուրիշներ, բայց ի տարբերություն շատ-շատերի՝ կարողացավ վեհ մնալ, շարունակել մի կյանք, որն իսկապես հայ բանասիրությանը, միջնադարյան մեր գրականությանը նվիրվելու հրաշալի օրինակ է: Մեծանուն գիտնական Բորիս Պիոտրովսկին «Ուրարտու, Ուրարտուի պատմությունը եւ կուլտուրան» աշխատության մեջ, որ լույս է տեսել 1944թ. (այսինքն՝ երկու տարի էր՝ Կ.Մելիք-Օհանջանյանը աքսորից վերադարձել էր), այսպիսի տողեր է ձոնել վերջինիս. **«Թանկագին Կարո Մելիք-Օհանջանյանին՝ ի հիշատակ հին բարեկամության եւ համատեղ աշխատանքի եւ ի նշան նոր բարեկամական հարաբերությունների եւ հետագա համատեղ աշխատանքի»:**

Այս համատեքստում անպայման պիտի հիշատակել Պարույր Սեւակի եւ Կարապետ Մելիք-Օհանջանյանի մտերմությունը. **«Չափածո նամակս իմ ազնիվ ուսուցչին՝ Կարո Մելիք-Օհանջանյանին.**

Դու դեռ արթուն, իմ ուսուցիչ,
Որպես Դավիթն՝ հայոց պաշտպան,
Եղիշեի քնարն առած՝
Կարդում ես դու հայոց մատյան՝
Հայոց մատյան ողբերով լի.
Ընդվզումով, գոռ մարտերով՝ հզորազոր,
Ով ուսուցիչ, հանճարով լի,
Քո աշակերտը քո շնչով է ապրում ցարդ:
Դարերի մեջ դու կմնաս,
Որպես Մասիս սարն աներեր,
Արաքսի պես դաշտն ոռոգող,
Դու հայոց դաշտ պերճ, բարեբեր:
Թե իմ դաշտում անունս մնա,
Կուզեմ քեզ մոտ հանգիստ նիրհել
Ոչ սին փառք ես դու տենչացել,
Այլ սրտեր ես դու ջերմացրել:

Կարապետ Մելիք-Օհանջանյան մարդու, գիտնականի, հետազոտողի դիմանկարը թերի կլինի, եթե չներկայացվի նրա հասարակական գործունեությունը, ակտիվ դիրքորոշումը երկրի համար կարեւոր հարցերում: **«Նա մեր ավագ սերնդի դասական հայագետներից էր, բայց շատերի նման միայն կաբինետային գիտնական չէր, այլ հասարակական գործունեության մեծ ջիղ ուներ, հասարակական կյանքին արձագանքող գիտնական էր, - նրա մասին պատմում է հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի ակադեմիկոս, պատմաբան Վլադիմիր Բարխուդարյանը, - բացի այդ՝ հաղորդակցվող եւ անմիջական անձնավորություն էր: Երբ լինում էր պատմության ինստիտուտում, ասպիրանտներով, երիտասարդ գիտաշխատողներով շրջապատում էինք նրան, լսում նրա համով-հոտով խոսքը: Սիրում էր շփվել հասարակության բոլոր շերտերի հետ՝ սկսած իր ծննդավայրից՝ Մեղրուց եկած հայրենակիցներից, վերջացրած՝ մտավորականներով, արվեստի աշխատողներով, ուսանողներով: Նրա պահվածքն այնպիսին էր, որ մենք ազատ ու անկաշկանդ էինք լինում նման մարդու հետ շփվելով»:**

Հայագետի կյանքում կարելի է առանձնացնել մի դրվագ եւս, որը լավագույնս բնորոշում է նրան: 1960-ականների վերջին գիտական հասարակայնության (եւ ոչ միայն) մեջ մեծ ալեկոծում եւ վրդովմունք առաջացրեց, երբ ադրբեջանցի Զիա Բունիաթով կոչեցյալ գիտնականն իր աշխատություններում խեղաթյուրեց հայ ժողովրդի պատմության շատ հարցեր: Եվ ոչ այլ ոք, եթե ոչ Կարապետ Մելիք-Օհանջանյանն ոչ միայն արձագանքեց, այլեւ մերկացրեց հայ ժողովրդի պատմությունը խեղաթյուրողին «Զիա Բունիաթովի գրական-պատմական հայեցակարգը» հիմնարար հոդվածով, որ ռուսերեն լույս տեսավ «Բանբեր Հայաստանի արխիվների» հանդեսում (1968թ., N2) եւ այլ պարբերականներում:

Կարո Մելիք-Օհանջանյանը երկրային կյանքին հրաժեշտ տվեց 1970թ. փետրվարի 24-ին, Երեւանում: Կարողացավ ստեղծել մնայուն արժեքներ, եւ պատահական չէ, որ Սեւակն ասում էր. **«Կուզենայի քո ածյունի մոտ լինել, կուզենայի քեզ միշտ ունկնդրել»**: Մեծ հայագետի մահվանից մեկ տարի հետո նա էլ դարձավ հավերժի ճամփորդ...

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Տիրայր Ղահրամանյան. «Մենք ամեն ինչ անելու ենք, որ մարզպետը պատասխան տա իր արածների համար, իսկ Կապանի քաղաքապետը հեռանա...»

Տիրայր Ղահրամանյան. ծնվել է Կապանում 1989 թվականին հունիսի 11-ին: Մինչեւ յոթերորդ դասարանը սովորել է Կապանի N2 միջնակարգ դպրոցում, այնուհետեւ տեղափոխվել է N7 միջնակարգ դպրոց: Բարձրագույն կրթությունը ստացել է Երեւանի ճարտարագիտական համալսարանի Կապանի մասնաճյուղում: Նաեւ հաշվապահական դասընթացներ է ավարտել: Հաշվապահությամբ է զբաղվել, այժմ «Սունալուս-շին» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գլխավոր հաշվապահն է:

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության կապանյան կառույցի հիմնադիրներից է, նրա խորհրդի անդամը:

***

- Պարոն Ղահրամանյան, ի՞նչ ասել է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության կապանյան կառույց եւ ե՞րբ է հիմնադրվել:

- ՔՊ Կապանի կառույցը հիմնադրվել է 2015թ. վերջին, 2016թ. սկզբին, ղեկավար մարմինը Կապանի տարածքային խորհուրդն է՝ բաղկացած հինգ հոգուց՝ Արշավիր Խալափյան, Մարինա Ղազարյան, Նարեկ Ղահրամանյան, Նարեկ Բաբայան, Տիրայր Ղահրամանյան: Կառույցին ներկայումս անդամակցում է մոտ 40 մարդ: Բայց օրավուր կուսակցությանն անդամագրվել ցանկացողների թիվն ավելանում է:

- Իսկ ի՞նչ կասեք մարզի մյուս տարածաշրջանների՝ Գորիսի, Սիսիանի, Մեղրու մասին:

- Մտադրություն ունենք այդ տարածաշրջաններում եւս կուսակցության գրասենյակներ բացել: Այդ տարածաշրջաններից, նաեւ Քաջարանից, Ագարակից մարդիկ զանգահարում են եւ հայտնում, որ պատրաստ են անդամակցել «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությանը:

- Ի՞նչ սկզբունքով եւ պայմաններով եք մարդկանց ընդունում կուսակցության շարքերը:

- Դիմում են տալիս, որից հետո ուսումնասիրում ենք նրա անցյալը, ներկա գործունեությունը, որովհետեւ չի բացառվում, որ Հանրապետական կուսակցությունից դուրս եկած մարդիկ ցանկանան համալրել «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության շարքերը: Ցանկացած դիմումատուի կարող ենք ընդառաջել, եթե մարդը նորմալ անցյալ է ունեցել: Բայց եթե ընտրակեղծարար կամ ընտրակաշառք բաժանող է եղել, տեղ չպետք է ունենա մեր շարքերում: Մենք դիմումներն ուղարկում ենք կուսակցության վարչություն, որտեղ էլ ծանոթանում են փաստաթղթերին, ըստ այդմ՝ որոշում նրանց ընդունելության հարցը:

- Քաղաքացիական անհնազանդության երթերի ժամանակ բազմաթիվ կոչեր հնչեցին, որոնցից մեկն առնչվում էր Սյունիքի մարզպետին, ավելի ստույգ՝ նրա հրաժարականին, մյուսն էլ՝ Կապանի քաղաքապետի հրաժարականին: Այդ կոչերն օրակարգո՞ւմ են, թե՞ պարզապես հնչել-գնացել են:

- Սյունիքի մարզպետն իրեն այնպես է պահել մարզում, որ միայն հրաժարական տալով չի պրծնի: Մենք ամեն ինչ անելու ենք, որ նա պատասխան տա իր արածների համար, մանավանդ Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատին առնչվող գործողությունների առումով: Հանրապետության վարչապետն էլ ասաց, որ հանքարդյունաբերական ձեռնարկություններում ստուգումներ կիրականացվեն: Մենք հետամուտ ենք լինելու, որ Սյունիքի մարզպետը պատասխան տա, քանզի, ամեն ինչից զատ, իր թիկնազորից մարդիկ ապրիլյան իրադարձությունների ժամանակ հարձակվել են ցուցարարների վրա: Նաեւ ֆուտբոլը Կապանից տանելու եւ կադրային ջարդ անելու համար պիտի պատասխան տա:

Վահե Հակոբյանի հետ կապված խնդիրը մինչեւ թավշյա հեղափոխություն էլ առանձին ներկայացրել եմ Նիկոլ Փաշինյանին:

Մենք մեր տարածաշրջանի առկա խնդիրները հանրայնացնելու ենք, հասցնելու ենք ընդհուպ մինչեւ քննչական ծառայություններ: Նույնն էլ Կապանի համայնքապետին առնչվող: Բոլոր ապօրինությունները ջրի երես պիտի հանվեն:

- Կուզեինք մի հարցի շուրջ եւս զրուցել. որոշ մարդկանց մեջ տպավորություն է ձեւավորվել, որ յուրաքանչյուր հեղափոխությանը հետեւում է պաշտոնակռիվը, ձեր դեպքում, քանի որ վարչապետի կուսակիցներն եք, նման բան կա՞, թե՞ ոչ:

- Կարող եմ հավաստիացնել, որ նման բան չկա, եթե նման բան լիներ, իսկույն հայտնի կդառնար, քանի որ փոքր քաղաքում ենք բնակվում, իրար գիտենք: Եթե կադրային խնդիր էլ ծագի, մենք չենք առաջնորդվի զուտ կուսակցական պատկանելության սկզբունքով: Դուք տեսնում եք, որ ոչ մեկս պաշտոն չունի այս պահի դրությամբ: Մեզ համար կարեւորն անձնավորության մարդկային եւ մասնագիտական որակներն են:

- Մի քանի օր է, ինչ բուռն քննարկվում է Սյունիքի մարզպետի հնարավոր թեկնածուների խնդիրը: Տարբեր անուններ են շրջանառվում: Երեք օր առաջ էլ տարածվեց, թե այդ պորտֆելը տալիս են «Ճառուկյան» դաշինքին: Իրո՞ք, այդպես է:

- Վերջնական որոշում չկա, ընդամենը խոսակցություններ են:

- Իսկ այդ խնդրում հուշելու, դիրքորոշում հայտնելու հնարավորություն ընձեռվե՞լ է Ձեզ:

- Մեզ հետ քննարկում չի եղել, բայց ասել են, որ մեզ հետ պիտի քննարկեն այդ խնդիրը: Մեր դիրքորոշումն այն էր, որ մարզպետը լինի մեր կուսակցությունից: Բայց քանի որ կառավարությունը կազմվում է կոալիցիոն սկզբունքով, ընբռնումով ենք մոտենում խնդրին, որ մարզպետն այլ կուսակցությունից էլ կարող է լինել: Եւ այդ հարցում խոչընդոտ չենք հանդիսանում:

- Նույն կերպ լուրեր էին շրջանառվում Կապանի համայնքապետի առնչությամբ: Ասում էին, որ Ձեր կուսակցությունը հավակնում է այդ պաշտոնում տեսնել...

- Դարձյալ քննարկման փուլում է: Առայժմ հստակ ոչինչ չկա: Մի բան է հստակ՝ քաղաքում ստեղծված նոր իրավիճակում չի կարող Աշոտ Հայրապետյանը վարել այդ պաշտոնը:

- Եվ վարչապետը, եւ մյուս քաղաքական ուժերի ներկայացուցիչները չեն էլ թաքցնում, որ ներկա կառավարության առաջնահերթություններից մեկն արտահերթ խորհրդանական ընտրությունների անցկացումն է: Դուք շատ լավ իմանալով Կապանը, նաեւ Սյունիքը, ինչպե՞ս եք գնահատում ուժերի ներկա դասավորությունը Սյունիքում:

- Վստահ եմ՝ եթե Ընտրական օրենսգիրքը փոխվի, ռեյտինգային համակարգը վերանա, հարյուր տոկոսանոց համամասնական սկզբունքը գործի, մեր կուսակցությունը բացարձակ մեծամասնություն կապահովի ե՛ւ Կապանում, ե՛ւ Սյունիքում: Ըստ իս՝ առաջիկա ընտրություններում բացառվելու են ե՛ւ ընտրակաշառքը, ե՛ւ ահաբեկումը ե՛ւ այլ արատավոր երեւույթներ: Ամենամաքուր ընտրությունները պիտի կազմակերպենք...

- Եվ չե՞ք կարծում, որ եթե մարզպետը, համայնքապետերը Ձեր կուսակցությունից չլինեն, Ձեր նշած ամենամաքուր ընտրություններն անիրականանալի խնդիր կդառնան առնվազն Սյունիքում:

- Մենք նաեւ այդ հանգամանքն ենք հաշվի առել: Իշխանական լծակները միշտ էլ վճռորոշ դեր են խաղում ընտրությունների ժամանակ, բայց չենք կասկածում, որ ընտրությունները կանցնեն օրինականության սահմաններում, համոզված ենք, որ մարդիկ ազատ կամարտահայտման հնարավորություն կունենան:

- Եթե անկեղծ լինենք՝ հեղափոխության շունչը դժվար է հասնում մեր մարզ, կես-լուրջ, կես-կատակ ասում են՝ հեղափոխության արդյունքն առայժմ այն է, որ հայտնի թռչող սարքը Կապանի երկնակամարում չի երեւում այլեւս: Բայց մեզ համար հաճելի նորությունն այն է, որ վարչապետի հանձնարարությամբ հանրապետության լեռնամետալուրգիական ձեռնարկություններում ստուգումներ են անցկացվելու:

- Դա նաեւ նրանով է պայմանավորված, որ խոշոր հարկատուների ցուցակում «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ն զգալիորեն զիջել է դիրքերը, թեեւ հանքաքարի արդյունահանման ծավալները գնալով ավելացել են: Հանքարդյունաբերական ձեռնարկություններ Հայաստանում շատ կան, բայց, կարծում եմ, ստուգումները, նախեւառաջ, Սյունիքին են վերաբերում, մասնավորապես հանրապետության լեռնահանքային հսկային՝ Քաջարանի կոմբինատին:

- Ձեր կուսակցությունը դիրքորոշում ունի՞ այդ կապակցությամբ:

- Մենք էլ ենք կարծում, որ անպայման ստուգումներ պիտի լինեն, այն տպավորությունն ունենք, որ Վահե Հակոբյանի խարդախությունների հետեւանքով է, որ Քաջարանի կոմբինատը հարկատուների ցուցակում զիջել է դիրքերը: Ավելին՝ մի բուռ մարդկանց, հիմնականում ղեկավարների, աշխատավարձը միլիոնների է հասնում՝ ընդհուպ քսան միլիոն, իսկ բանող զանգվածինը՝ 100-220 հազար դրամ, ինչի համար վերջերս ընդվզում եղավ կոմբինատում, դադարեցվեց ձեռնարկության աշխատանքը, որն աննախադեպ երեւույթ էր վերջին քսան-քսանհինգ տարում:

- Եթե չենք սխալվում, Ձեզ հետ նաեւ կոմբինատից խտանյութ տեղափոխող բեռնատարների տեղացի վարորդներն են հանդիպել: Մի քանի խոսք այդ մասին:

- Վարորդներն ասում էին, որ խտանյութը հիմնականում տեղափոխում են մարզպետի բեռնատարները, ինչի պատճառով իրենք անգործ են մնացել: Նախեւառաջ տեղացի վարորդները պիտի տեղափոխեն բեռները, մեզ համար անընդունելի է, որ դրսեկ վարորդներն ապահովված են աշխատանքով, իսկ տեղացի վարորդներն անգործ են մնացել:

- Դուք երաշխիք կտա՞ք, իշխող կուսակցություն լինելով հանդերձ, որ չեք թողնի տարբեր պատեհապաշտներ սողոսկեն «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության շարքերը:

- Դա լուրջ պրոբլեմ է, որովհետեւ մեզ շատ են դիմում. փող բաժանող հանրապետականն է գալիս, այլ կուսակցություններից եւս դիմողներ կան: Կապանում բոլորին գիտենք: Դիմումատուների կենսագրությունները, ինչպես նշեցի քիչ առաջ, ներկայացնելու ենք մայրաքաղաք՝ կուսակցության կենտրոնակայան, այնտեղ պիտի որոշվի՝ ընդունե՞լ կուսակցության շարքերը, թե՞ ոչ: Եթե իր կենսագրության վրա բիծ է ունեցել, միանշանակ չի ընդունվելու կուսակցության շարքերը:

- Ձեր կուսակցության դիրքորոշումը, որքանով հասկանում ենք, Սյունիքում իրականացվող տարածքային քաղաքականության համար կարեւոր է լինելու, ինչպե՞ս եք կարողանալու Ձեր մոտեցումները տեղյակ դարձնել հանրությանը:

- Մեր գրասենյակի միջոցով, նաեւ մեր ֆեյսբուքյան էջով, լրատվամիջոցներով եւ մյուս հնարավոր խողովակներով:

- Վերջին ժամանակներս Կապանում մեծ աղմուկ բարձրացրած հարցերից մեկն էլ մարզադաշտի հետ է կապված, ավելի ստույգ՝ այն մասին, որ «Գանձասար-Կապան» թիմը տնային հանդիպումները դրսում է անցկացնում:

- Այո, Սյունիքի ներկայիս մարզպետը կապանցի ֆուտբոլիստներին զրկել է իրենց մարզադաշտում ֆուտբոլ խաղալու հնարավորությունից: Կապանյան թիմը հանրապետության գավաթն է նվաճել, բայց հաղթանակը տոնում են Սիսիանում, Գորիսում, Մեղրիում: Որքանո՞վ է դա տրամաբանական: Հավանաբար մարզպետը վախենում է նման միջոցառում կազմակերպել Կապանում, դա կարող է համաքաղաքային բողոքի նոր ալիք բարձրացնել: Մենք (դեռեւս մինչեւ վարչապետ դառնալը) Կապանի մարզադաշտի խնդրով դիմել ենք Նիկոլ Փաշինյանին, ով հավաստիացրել է, որ հարցը դրական լուծում կստանա՝ հօգուտ Կապանի:

Մեկ տարուց ավելի է՝ այդ հարցով զբաղվում ենք, ձգտում ենք, որ գոնե օգոստոսից, երբ մեկնարկի նոր խաղաշրջանը, «Գանձասարը» հանդես գա սեփական հարկի տակ:

Զրույցը՝ ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ
եւ ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆԻ
18 մայիսի 2018թ.

Ինչո՞ւ են թաքցնում «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» բարեգործական հիմնադրամի երկու տարվա հաշվետվությունը

էջ 1 Այնպես որ՝ իրավունք ունենք ակնկալել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից, որ կձեռնարկվեն Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենքով նախատեսված միջոցներ եւ հանրությանը կներկայացվեն այդ հիմնադրամի 2015 եւ 2017 թվականների հաշվետվությունները:

Հիմա՝ այդ հիմնադրամի 2016 թվականի հաշվետվության մասին:

Նախ՝ հրապարակված հաշվետվության մեջ թաքցրել են հոգաբարձուների խորհրդի նախագահի անունը, որ Վահե Հակոբյանն է:

Այդ տարում հիմնադրամը ստացել է 883.3 մլն ՀՀ դրամ:

Ովքե՞ր են այդ գումարները նվիրաբերել «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» բարեգործական հիմնադրամին:

Մոտ 680 մլն դրամ նվիրաբերել է Քաջարանի կոմբինատը՝ իբրեւ հիմնադիր:

Մյուս նվիրատուների անունները կարելի է եւ չթվարկել, սակայն կա մի հանգամանք, որ չենք կարող չնշել:

Առայժմ անհասկանալի պատճառներով Միսակ Աղվանի Հովսեփյանը, ով ՀՀ քննչական կոմիտեի նախկին ղեկավարի որդին է, Վահե Հակոբյանի գլխավորած մասնավոր հիմնադրամին է փոխանցել 51 մլն դրամ:

Մի հանգամանք էլ. հաշվետվության մեջ բացակայում է հավաքված գումարից 20 մլն դրամը նվիրողի անունը:

Եւ, որ շատ կարեւոր է, հիմնադրամի հաշվետվության մեջ ծախսված գումարները շատ ընդհանրական են նշված ու անհասցե:

Օրինակ, մեկ տարում 576,7 մլն դրամ ծախսվել է իբրեւ «աջակցություն սպորտին», 212 մլն դրամ՝ «աջակցություն ֆիզիկական անձանց»՝ չնշելով, թե կոնկրետ ում են տվել այդ գումարը, 28 մլն դրամը՝ «այլ ծախսեր» են, 21 մլն դրամը՝ «վարչական ծախսեր» …

Սույն հրապարակման սկզբնամասում ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեին խնդրանք ներկայացրինք՝ հրապարակել հիմնադրամի 2015 եւ 2017 թվականների հաշվետվությունը:

Հիմա եւս մեկ խնդրանք այդ գերատեսչությանը՝ 2016 ֆինանսական տարում օգտագործված 883 մլն դրամը կոնկրետ ի՞նչ նպատակով է ծախսել Վահե Հակոբյանի գլխավորած հիմնադրամը:

Հիշեցնենք, որ դա Հայաստանի Հանրապետության վերոնշյալ օրենքի պահանջն է:

Սամվել Ալեքսանյան

Կապանում չկայացավ «Արարատցեմենտի» արտադրամաս կառուցելու վերաբերյալ հանրային քննարկումը

Հունիսի 27-ին ժամը 15-ին Կապանի համայնքապետարանի նիստերի դահլիճում պիտի տեղի ունենար «Արարատցեմենտ» ՓԲ ընկերության կողմից ներկայացված Կապան քաղաքում նախատեսվող թիվ 2 ցեմենտի աղացման արտադրամասի կառուցման աշխատանքային նախագծի՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հայտի վերաբերյալ հանրային քննարկումների երրորդ փուլը: Բայց մինչեւ հանրային քննարկումը սկսվելը «Երկիր ծիրանի», «Ելք» կուսակցությունների ներկայացուցիչները, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները, բնապահպանները շրջափակել էին համայնքապետարանի դահլիճի մուտքը: Իսկ երբ սկսվեց քննարկումը, նրանք մտան դահլիճ եւ վանկարկումներով ու իրենց պահանջներով փաստորեն վիժեցրին հանրային քննարկումը: Նրանց մտահոգությունն այն էր, որ տարածաշրջանի բնապահպանական խնդիրներին ավելանում է եւս մեկը: «Արարատցեմենտ» ՓԲ ընկերության գլխավոր իրավաբան Ալիկ Ալեքսանյանը հայտնեց, որ վերջին տասը օրում կապանցիներից որեւէ հարցադրում, մտահոգություն, առաջարկություն չեն ստացել: Որեւէ մտահոգվող անձ կառուցվող արտադրամասի շինհրապարակ չի այցելել: Ի վերջո, Կապանի համայնքապետի տեղակալ Արգամ Գրիգորյանը, ով վարում էր հանրային քննարկումը, այն չկայացած համարեց, ինչից հետո միայն կրքերը հանդարտվեցին:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Կավարտը պատասխան է նրանց, ովքեր շեփորահարում են պատասխանատու հանքարդյունաբերության մասին

Կապանի Կավարտ գյուղական թաղամասը գտնվում է քաղաքի հյուսիսում՝ կենտրոնից 5 կմ հեռավորության վրա: Կավարտ տանող ճանապարհին անցնում է Արփիկ, Աշոտավան, Լենհանքեր (Լենինյան հանքեր, Լենգրուպա) թաղամասերով: Ճանապարհին զուգահեռ հոսում է նույնանուն՝ Կավարտ գետակը, որը Ողջիի վտակն է:

Մեծ հաշվով, սա գետակ էլ չէ, այլ ընդամենը մի փոքր առու:

Կավարտ թաղամասից մինչեւ Արփիկ ընկած հատվածում գետակը դարչնագույն է, իսկ Արփիկից ներքեւ՝ մինչեւ քաղաքի կենտրոն, դրա ջուրը սպիտակ գույնի է:

Տարբեր գույները տարօրինակ չպիտի համարել, եթե հաշվի առնենք, թե ինչ տարածքներով է հոսում Կավարտը: Մասնավորապես, Արփիկից ներքեւ ջրի սպիտակ գույնը, թերեւս, բնակիչների ու տարածքի տնտեսվարողների կողմից տարբեր կեղտաջրերի ու քիմիական նյութերի արտանետման հետեւանք է: Իսկ ահա ավելի բարձր հատվածում ջրի դարչնագույնը պայմանավորված է Կավարտի բաց հանքով:

Սա Կապանի ոսկի-բազմամետաղային հանքավայրի երակներից մեկն է: Հայկական բնապահպանական ճակատը (ՀԲճ) դեռ 2015-ին անդրադարձել էր հանքի պատմությանը:

Կավարտը մետաղների մշակմամբ հայտնի է դեռեւս հնագույն ժամանակներից: 18-րդ դարում արդեն հայտնի էր որպես պղնձի արդյունահանման եւ ձուլման կենտրոն: 19-րդ դարի կեսերից մինչեւ 20-րդ դարի սկիզբը Կավարտի կամ Ղաթարի պղնձահանքերը շահագործել են հույն արդյունաբերողներ Կոնդուրովները, հայ Խոջամիրովները եւ ապա նաեւ ֆրանսիացիները: Հանքավայրը հայտնի է նաեւ Մեծ Մաղարա անունով: 1920-ականների

սկզբին խորհրդային իշխանությունների կողմից վերաբացվեցին 1917-18 թթ. անհիշխանության եւ Հայաստանի 1-ին Հանրապետության օրոք փաստացի չգործող հանքերը: 1924 թ.-ից դրանք կոչվեցին Լենհանքեր: Մինչեւ 50-ական թթ. այն շահագործեցին որպես փակ հանքեր, իսկ ահա դրանից հետո մինչեւ 1985 թ. գործեցին որպես բաց հանքեր: Այդ գործունեության ընթացքում ավերվեց հին Կավարտ գյուղը՝ իր սբ Գեւորգ եկեղեցու հետ:

Հայաստանի անկախացումից հետո շահագործումը վերսկսվել է 1999 թվականին: Հետագայում՝ Կապանի լեռնահարստացման կոմբինատի մասնավորեցումից հետո, նոր սեփականատերը՝ կանադական «Դինո Գոլդ Մայնինգ» (ապա՝ «Դանդի Փրիշս Մեթալս Կապան») ընկերությունը, շարունակել է Կավարտի բացահանքի շահագործումը: Սակայն 2-3 տարի անց նորից դադարեցրել է եւ այսպիսի վիճակում թողել մեզ:

Հանքարդյունաբերող ընկերությունը պարտավոր էր բաց հանքի շահագործման դադարեցումից հետո ռեկուլտիվացիա անել՝ գրունտով փակել փորված հսկա «թասը», ինչի արդյունքում չէինք ունենա այն, ինչ այժմ կա:

Այսօր տեղումներից հետո ջրերը, լցվելով բացահանքի մեջ, կուտակվում են տեղում, ապա ներծծվում ու խառնվում գրունտային ջրերին, մի մասն էլ, հանքի տարածքով հոսելով, դուրս է գալիս ու խառնվում մակերեւութային ջրերին: Երկու դեպքում էլ հետեւանքներն աղետալի են:

ՀԲճ-ի անդրադարձից հետո «Հայկական ժամանակ» օրաթերթը զրուցել էր Կապանի քաղաքապետ Աշոտ Հայրապետյանի հետ, ով տարօրինակ ու ծիծաղելի պատասխան էր տվել թերթին. **«Ես կավարտեցի եմ: Կավարտի առու ասեմ, գետակ ասեմ, ձոր ասեմ, այդ փոքր քանակությամբ ջրերը, որ հոսում են, դրանք ընդամենը Կավարտ գյուղում գտնվող Ցուրտ աղբյուր կոչվող ջրերն են: Դուք եք որակում կարմիր կամ Համահայկական բնապահպանական ճակատը: Ձորի հատակը, գրունտն է կարմիր»**: Լրագրողի հարցին, թե արդյոք հողը կարմիր է ծանր մետաղների պատճառով, քաղաքապետն ասել էր. **«Ես չեմ կարող ասել: Ես նման տեղեկություն չունեմ: Եթե մենք ձեռքի տակ ունենանք հավաստի տվյալներ, որ այդ ջուրը պարունակում է ծանր մետաղներ, բնականաբար, մեր մտահոգությունը կհայտնենք»:** Այն, որ 2012-ից համայնքը ղեկավարող մարդը տարիներ շարունակ չի փորձել համայնքապետարանի կողմից լաբորատոր հետազոտություն պատվիրել գետի ջրերում առկա ծանր մետաղների քանակը ճշտելու, դրանով իսկ իր համայնքի, ավելին՝ իր հարազատ թաղամասի բնակիչների առողջությունը պաշտպանելու համար, խոսում է նրա աշխատանքի որակի մասին:

Առանձնացնենք միայն այն, որ Ա. Հայրապետյանը, կավարտեցիների ճանապարհը կարճացնելու համար, մի երկու տարի առաջ ճամփա է բացել հենց բաց հանքի եզրով: Այս ճանապարհով քայլելիս կարելի է տեսնել հանքը

էջ 7

Որքա՞ն գումար են հանգանակել Գորիսում ապրիլյան պատերազմի օրերին եւ ի՞նչ նպատակով է այն ծախսվել

Գորիսի «Մինա» հյուրանոցում հունիսի 20-ին ասուլիս էր՝ յուրօրինակ հաշվետվություն, որ տվեցին 2016թ. ապրիլյան պատերազմի ժամանակ հանգանակված գումարները կանոնակարգած հանձնաժողովի անդամներ Վաչագան Ադունցը, Մելիքսեթ Պողոսյանը, Մասիս Ղեւոնդյանը, Ժորա Ալեքսանյանը, Գառնիկ Սարգսյանը, Սուրիկ Բաղդասարյանը, Ավետիք Ավետիսյանը, Գեւորգ Բոլյանը: Ըստ նրանց՝ ապրիլյան պատերազմի ժամանակ Գորիսում նույնպես գումար հանգանակվեց՝ շուրջ 21 մլն դրամ:

Հանձնաժողովը զբաղեցրել էր քաղաքապետարանի աշխատասենյակներից մեկը. այն բոլորի համար հասանելի էր եւ հարմար:

Ինչպես կազմավորվեց հանձնաժողովը: Քանի որ պատերազմ էր, երկար- բարակ մտածելու ժամանակ չկար, հանձնաժողովում ընդգրկվեցին մեծ գումար նվիրաբերած մարդիկ: Տեսնելով, որ գումարը շատանում է, հանձնաժողովը որոշեց «Արարատ» բանկում հաշիվ բացել հանձնաժողովի անդամ Գառնիկ Սարգսյանի անվամբ եւ գումարը պահ տալ բանկին:

2016թ. ապրիլյան պատերազմին Գորիսի տարածաշրջանից մասնակցեց 224 երկրապահ: Նրանք համարյա երկու ամիս եղել են դիրքերում: Նրանց սննդի, կեցության հարցերը լուծելու համար ծախսվել է հանգանակված գումարից: Գնել են ծխախոտ, հաց, սուրճ, պահածոներ: Խրամատում գտնվող երկրապահների համար պատրաստվել են տաք ճաշեր, որի համար գնել են կարտոֆիլ, ոսպ, բրինձ, աղ եւ այլն: Գնվել են նաեւ ցեմենտ, բլոկնոտներ, գովազդային պաստառներ:

Գնումների ցանկը նայելուց ճնշում են «գովազդային պաստառներ», «բլոկնոտներ» գրառումները: Ինչի՞ համար էին գովազդային պաստառները, ինչի՞ համար էին բլոկնոտները…

Դրանց պատասխան- բացատրությունը տրվեց ասուլիսի ժամանակ. գովազդային պաստառները գնվել են Կորինձոր գյուղի մի բնակչից եւ օգտագործվել բլինդաժ կառուցելու ժամանակ. դրանց վրա հող է փռվել, իսկ բլոկնոտներում գրանցվել են հերթափոխն ընդունող- հանձնող երկրապահների անուններն ու զենքերի տեսակն եւ համարները:

Ըստ հանձնաժողովակների՝ հանգանակված գումարով Գորիսն օգնել է նաեւ Գորիսի հիվանդանոցում այդ օրերին բուժում ստացող զինվորներին:

Հավաքված գումարի շնորհիվ գնվել է նաեւ ցեմենտ, որն օգտագործվել է առաջնագծում հենակետ կառուցելու, դիրքերում շինարարական աշխատանքներ կատարելու համար:

Իրենց առաքելությունն ավարտելուց հետո գորիսեցի երկրապահները տուն դարձան: Սակայն հաշվեհամարում դեռ գումար կար, այն լրիվ չէր ծախսվել ու մինչեւ հիմա էլ կա՝ 5.0200 դրամ եւ 3700 ԱՄՆ դոլար՝ ավանդի տեսքով: Ըստ հանձնաժողովի անդամների՝ հանգանակված գումարն ավանդի ձեւով են պահում բանկում՝ նկատառումով, որ գումարի վրա գումար ավելանա…

Գումարի մնացորդի շուրջ քննարկումներ եղել են ու հիմա էլ շարունակվում են. գումարը բաժանել ապրիլյանի մասնակից երկրապահների ընտանիքներին՝ ըստ նախնական հաշվարկի՝ յուրաքանչյուրին կհասնի մոտ 30 հազար դրամ կամ… Առաջ է քաշվել նաեւ Գորիսի երկրապահների միության համար մեքենա գնելու հարցը, որը դարձյալ մերժվել է: Ու էլի տեսակետներ…

Ասուլիսի ժամանակ այդ հարցի շուրջ նույնպես քննարկում եղավ: Եվ դարձյալ ընդհանուր հայտարարի չեկան: Հանձնաժողովի անդամները սպասում են նաեւ հանրության արձագանքին. չէ՞ որ դա մարդկանց փողն է, եւ իրենք կարող են այդ գումարի տնօրինման վերաբերյալ կարծիքներ հայտնել:

Ասուլիսը հեռարձակվել է syuniacyerkir.am կայքով:

ԱԼՎԱՐԴ ՄԵՍՐՈՊՅԱՆ

Աղվան Հովսեփյանի որդին Վահեի գլխավորած մասնավոր հիմնադրամին նվիրաբերել է 51 մլն դրամ, ինչո՞ւ

«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» բարեգործական հիմնադրամը, որի հիմնադիրն է Քաջարանի կոմբինատը, որի հոգաբարձուների խորհրդի նախագահն էր եւ է Վահե Հակոբյանը, 2016 թվականին ունեցել է 883.3 մլն դրամ ֆինանսական մուտքեր:

Ֆինանսավորման աղբյուրների մեջ նշված է նաեւ ՀՀ քննչական կոմիտեի նախկին ղեկավար, շատ հարգելի Աղվան Հովսեփյանի որդու՝ Միսակ Աղվանի Հովսեփյանի անունը, ով 50 մլն դրամ է նվիրաբերել Վահե Հակոբյանի գլխավորած մասնավոր հիմնադրամին:

Հիմնադրամին 1 մլն դրամ է նվիրաբերել «Բելազ Կավկազ Տրանս Սերվիս» ՍՊ ընկերությունը, որը նույնպես պատկանում է Միսակ Հովսեփյանին:

Առաջին հայացքից առավել քան սովորական վիճակ է՝ քաղաքացին 51 մլն դրամ է նվիրաբերել ինչ-որ մասնավոր հիմնադրամի, բայց…

Հայաստանի երրորդ հանրապետության ամենաազդեցիկ դեմքերից մեկի՝ Աղվան Հովսեփյանի ընտանիքը 51 մլն դրամ է նվիրաբերում Հայաստանի ամենախոշոր լեռնահանքային ընկերության՝ Քաջարանի կոմբինատի կողմից հիմնադրված մասնավոր հիմնադրամին:

Դա էլ, միգուցե, համարենք սովորական հանգամանք, սակայն…

Աղվան Հովսեփյանի ընտանիքին պատկանող «Բելազ Կավկազ Տրանս Սերվիս» ՍՊ ընկերությունն առեւտրային կապերի մեջ է «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲ ընկերության հետ, որի ստվերային ղեկավարը 2014-ի հուլիսից Վահե Հակոբյանն է:

Ըստ Քաջարանից ստացված տեղեկությունների՝ այդ ՍՊԸ-ն է «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲԸ-ին մատակարարում «Բելազ» -ի եւ այլ մեքենաների ավտոդողեր. այո, հենց այդ ՍՊ ընկերությանն է տրվել բացառիկ այդ բիզնեսը:

Այնուհետեւ՝ Աղվան Հովսեփյանի ընտանիքին պատկանող մեկ այլ ընկերություն էլ Մեղրի գետի վրա կառուցել եւ շարունակում է կառուցել հիդրոէլեկտրակայաններ:

Սակավաջուր, իսկ ամռան ամիսներին գրեթե ջրազուրկ Մեղրի գետի վրա հէկերի կառուցման դեմ ընդվզող մեղրեցիների դժգոհություններին հետեւողականորեն ընթացք չի տվել Սյունիքի երբեմնի մարզպետ Վահե Հակոբյանը:

Կարելի է ենթադրել, որ Աղվան Հովսեփյան զորավոր մարդու ընտանիքը հենց այդ կապերի եւ առնչությունների անսասանությունն ապահովելու համար է երախտագիտություն հայտնել Վահեին՝ նրա գլխավորած մասնավոր հիմնադրամին նվիրաբերելով 51 մլն դրամ:

Հո չե՞նք ասի, որ գումարը տրվել է Սյունիքի մարզին, մանավանդ որ պարզ չէ դեռեւս, թե այդ հիմնադրամը Սյունիքում ինչ աշխատանքներ է կատարել:

Դա էլ՝ մի կողմ:

Այլ հարց է հիմա մեզ հետաքրքրում:

Արդյո՞ք Աղվան Հովսեփյանի ընտանիքն այդկերպ է միայն երախտագիտություն հայտնել Վահե Հակոբյանին:

Արդյո՞ք այդ կապերի եւ առնչությունների շնորհիվ էր, որ Վահե ավազակապետը տեղի-անտեղի հայտարարում էր, թե ինքն է Սյունիքում քրեական գործեր հարուցում, քրեական գործեր կարճում, նախաքննության ժամկետներ երկարաձգում:

Արդյո՞ք «Բելազ»-ի ավտոդողերի մատակարարման անխափանությունն ապահովելու համար չէ ՀՀ քննչական կոմիտեն լռությամբ հետեւել, թե ինչպես է Սյունիքի ավազակապետը, տեղի ոստիկանների ինքնիրավչությամբ, շրջանցելով Հայաստանի Հանրապետության օրենքներն ու Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումները, «Սյունյաց երկրի» դեմ մի քանի օրվա ընթացքում չորս-հինգ քրեական գործ շինել:

Մենք չկարողացանք ձեռք բերել «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» բարեգործական հիմնադրամի 2015 եւ 2017 թվականների հաշվետվությունները եւս. հակառակ գործող օրենքի՝ դրանք չեն հրապարակվել սահմանված կարգով: Ուստի եւ չենք կարող ասել, թե վերոգրյալ առեւտրային հարաբերություններն ինչ դրսեւորումներ են ունեցել 2015 եւ 2017 թվականներին: Առայժմ խոսքը միայն 2016-ի մասին է:

Եւ հույս ենք հայտնում, որ «Սյունյաց երկիր» թերթի խմբագրությանն առնչվող քրեական հնարված գործերի նախաքննության ընթացքում, Վահե Հակոբյանին հարցաքննելուց բացի, ջրի երես կհանվի Վահե Հակոբյանի եւ Աղվան Հովսեփյանի ընտանիքի առեւտրային կապերի ամբողջական պատկերը, այլապես խոսք լինել չի կարող նախաքննության օբյեկտիվության եւ օրինականության մասին:

Սամվել Ալեքսանյան

Աշոտ Հովհաննիսյանի պատասխան խոսքը ««Բելազ Կավկազ Տրանս Սերվիս» ՍՊԸ սեփականատերը Եվգենի Վասիլեւիչ Կեդան է»

Հունիսի 20-ին www.syuniacyerkir.am կայքում հրապարակվել է հոդված՝ «Աղվան Հովսեփյանի որդին Վահեի գլխավորած մասնավոր հիմնադրամին նվիրաբերել է 51 մլն դրամ, ինչու՞»:

Հոդվածում նշվել է, որ «Հիմնադրամին 1մլն դրամ է նվիրաբերել «Բելազ Կավկազ Տրանս Սերվիս» ՍՊԸ-ն, որ… պատկանում է Միսակ Հովսեփյանին»:

Գրվել է նաեւ՝ «Ըստ Քաջարանից ստացված տեղեկությունների՝ այդ ՍՊԸ-ն «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲԸ-ին մատակարարում է «Բելազ»-ի եւ այլ մեքենաների անվադողեր…»:

…Հունիսի 20-ի օրվա վերջին թերթի խմբագրին է զանգահարել մի անձնավորություն եւ ներկայացել՝ Աշոտ Հովհաննիսյան, «Բելազ Կավկազ Տրանս Սերվիս» ՍՊԸ տնօրեն:

Նա հաղորդել է, թե ««Բելազ Կավկազ Տրանս Սերվիս» ՍՊԸ-ն կապ չունի

Միսակ Հովսեփյանի հետ, այդ ընկերության սեփականատերն է Բելառուսի քաղաքացի Եվգենի Վասիեւիչ Կեդան:

««Բելազ Կավկազ Տրանս Սերվիս» ՍՊԸ-ն «Բելազ»-ի ներկայացուցիչն է Հայաստանում, գործընկերային կապերի մեջ է Քաջարանի կոմբինատի հետ, կոմբինատին է մատակարարում «Բելազ»-ի պահեստամասեր, նաեւ «Բելազ» ավտոմեքենաներ:

Իսկ թե ո՞ր ընկերությունն է «Բելազ»-ի ավտոդողեր մատակարարում Զանգեզուրի ՊՄԿ-ին, ինքը չի կարող ասել:

Աշոտ Հովհաննիսյանը հաստատեց, որ իրենց ՍՊԸ-ն իրոք 2016-ին 1մլն դրամ է հատկացրել «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» բարեգործական հիմնադրամին:

Հ. Գ. 1

Խմբագրությունն ի գիտություն է ընդունում այդ հայտարարությունը, ինչը նշանակում է, որ Միսակ Հովսեփյանը Վահեի գլխավորած մասնավոր հիմնադրամին վճարել է ոչ թե 51, այլ 50 մլն դրամ: Իսկ թե ինչպե՞ս է կոչվում Միսակ Հովսեփյանի ՍՊԸ-ն, որ «Բելազ»-ի ավտոդողեր է մատակարարում Քաջարանի կոմբինատում, կճշտենք եւ կներկայացնենք ընթերցողներին:

Հ. Գ. 2

«Բելազ Կավկազ Տրանս Սերվիս» ՍՊԸ-ն Վահեի գլխավորած մասնավոր հիմնադրամին 2017-ին տվել է 24.8 մլն դրամ:

Վահեի հանդեպ այդ առատաձեռնությունը, կարծում ենք, անկեղծ է եւ ոչնչով պայմանավորված չէ: Միայն մի բան՝ այդ ամենը Սյունիքի հետ որեւէ կապ չունի:

«Սյունյաց երկիր»

ԿՈԹՈՂԱՅԻՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՅ ՄԱՄՈՒԼԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՍՏԱՆՈՒՄ

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտը «Մեսրոպ արք. Աշճեան» մատենաշարով լույս է ընծայել «Հայ մամուլի պատմություն» հեղինակային խմբի աշխատության երկրորդ հատորը, որն ավելի վաղ էր պատրաստ տպագրության: Այն ընդգրկում է հայ մամուլի պատմության մի կարեւոր ու ճակատագրական ժամանակաշրջան՝ 1900–1922 թվականները: Հայ մամուլի պատմության այս հատորը բովանդակում է ստվարաթիվ հայերեն թերթերի եւ ամսագրերի պատմությունը՝ սկսած «Մշակից» եւ վերջացրած հայ քաղաքական կուսակցությունների մամուլով:

Հատորի նյութերը դասավորված են ժամանակագրական եւ, միաժամանակ, աշխարհագրական սկզբունքներով: Հատորը կազմելու ընթացքում գործել է նաեւ նյութերը գաղափարական եւ քաղաքական ուղղությունների տրոհման մոտեցումը:

Հաշվի է առնվել մամուլի բովանդակային ընդհանրության, ուրեմն եւ ըստ այդմ այն դասակարգելու մոտեցումը՝ թերթերի եւ ամսագրերի վիթխարի քանակության պայմաններում: Այստեղից էլ գլուխների բաժանումները նաեւ թեմաների՝ երգիծական, մանկավարժական, մանկապատանեկան, ազգային կուսակցությունների եւ այլն:

Հատորի հեղինակները մշտապես կարեւորել ու գնահատել են մամուլի հասարակական-քաղաքական արժեքը՝ ելնելով այն իրողությունից, որ մամուլն իր սկզբնավորման օրերից մինչեւ օրս հիմնականում եւ միանշանակորեն ունեցել է հասարակական ուղղություն եւ ուղղվածություն:

1900-ից 1922 թվականն ընկած շրջանում լույս տեսած հայ պարբերականների գաղափարական բովանդակության արժեւորման ու գնահատման մեջ որպես առաջնային չափանիշ նկատի են առնվել հենց հասարակական կողմնորոշումները:

Եվ ամենից էականը նաեւ այն է, որ հայ պարբերական մամուլը բնութագրվում եւ գնահատվում է ոչ թե զուտ ազգային ինքնաբավ շրջանակներում, այլ ընդհանուր առմամբ քաղաքակրթական անցուդարձին, հարեւան եւ համաշխարհային այլ ազգերի պատմությանն ու մշակույթին լծորդված:

Հայ պարբերական մամուլի պատմության պատկառելի սույն հատորն առնչվում է 1900–1922թթ. ընդգրկող ժամանակաշրջանում արեւմտահայ, արեւելահայ եւ գաղութահայ իրականություններում լույս տեսած անհավատալիորեն մեծ թվաքանակի եւ բնականաբար համապատասխան մեծ ընդգրկումների հետ: Հայ պարբերական մամուլի էջերում բնականորեն արտացոլվել են ազգային եւ համաշխարհային պատմության կարեւորագույն ու շրջադարձային երեւույթներն ու իրողությունները, նախեւառաջ հայ ազգային-ազատագրական պայքարի ընթացքը, հայության կրած առօրյա եւ ամենօրյա սոցիալական եւ ազգային հարստահարումներն ու նվաստացումները: Պարբերականներում պատշաճ կերպով լուսաբանվել եւ գնահատվել են համաշխարհային պատմական հեղաբեկումները 1905 եւ 1917 թվականներին, երիտթուրքական հեղաշրջումը, Բալկանյան պատերազմները, առաջին համաշխարհային պատերազմը, հայոց ցեղասպանությունն ու հայրենազրկումը, ցարիզմի անկումն ու հայկական պետականության վերածնունդը եւ բազմաթիվ այլ հիմնահարցեր ու թեմաներ: Հայ ժողովրդի հավաքական ցավն ու բողոքը, տագնապներն ու ընդվզումը, հոգեկան ալեկոծությունները լավագույնս արտահայտված են XX դարասկզբի հայ պարբերական մամուլի էջերում: Այս ամենով հանդերձ, պարբերական մամուլը կարելի է համարել հայ ժողովրդի սոցիալական, քաղաքական, հոգեւոր-բարոյական եւ մշակութային կյանքի տարեգիր: Հատորի հեղինակներին հաջողվել է քսաներորդ դարասկզբի հայ մամուլը գնահատել ու արժեւորել նաեւ մամուլի ժանրային զարգացումների տեսանկյունից (էսսե, ակնարկ, լրատվական-ինֆորմացիոն բնույթի հրապարակումներ, քաղաքական տեսություններ, վերլուծականներ եւ այլն): Զուգահեռաբար համադրվում են հայ մամուլի լրագրական եւ լրատվական արժեքները եվրոպական եւ ռուսական մամուլի համընթաց մակարդակով:

Հատորը վիթխարի նյութ է տալիս հայ իրականության հատկապես արեւմտահայ եւ արեւելահայ հատվածներում ընթացած հասարակական-քաղաքական բազմաբնույթ անցուդարձի ու տեղաշարժերի, ազգային-ազատագրական շարժման ընթացքի, նրա գործիչների ու գաղափարախոսության, հայկական բարեՆորոգումների խնդրի վերաբերյալ: Հատորի էջերում հառնում են հայ մամուլի եւ հրապարակախոսության բազմաթիվ ճանաչված ու երեւելի դեմքեր՝ սկսած Գր. Արծրունուց, Ալ. Քալանթարից, Ալ. Ծատուրյանից, Ա. Չոպանյանից, Վրթ. Փափազյանից, Հովհ. Տեր-Մարտիրոսյանից (Ա-Դո), Գր. Չալխուշյանից, Լեոյից, Դ. Անանունից, Հր. Աճառյանից, Աշ. Հովհաննիսյանից, Ալ. Շիրվանզադեից, Գ. Լեւոնյանից մինչեւ Հովհ. Գազանճյան, Ա. Անտոնյան, Հ. Մամուրյան, Մ. Գոչունյան, Ռ. Զարդարյան, Բ. Քեչյան, Տ. Ճիվելեկյան, Ա. Ալպոյաճյան, Հ. Արփիարյան, Թլկատինցի, Օ. Չիֆթե-Սարաֆ, Ռ. Որբերյան, Հր. Մամուրյան, Հովհ. Գայսերյան, Թեոդիկ. Ե. Թոլայան (Կավռոշ), Ա. Պեյլերյան, Հ. Մառք, Արտ. Հարությունյան, Առանդար (Մ. Գույումճյան), Եղ. Թորոսյան, Ս. Բյուրատ, Վ. Թեքեյան, Ար. Արփիարյան, Տիրան Քելեկյան, Միք. Կյուրճյան, Վ. Քյուրքճյան, Եր. Օտյան, Մ. Տամատյան, Վ. Մալեզյան եւ շատ ուրիշներ: Ընդհանրական եւ կոնկրետ գործերով ու նախաձեռնություններով վեր է հանված հայ մամուլի առաջընթացում նրանց ցույց տված եւ ցուցաբերած մեծագույն հանձնարարությունն ու նպատակը:

Հատորի էջերը մեկ առ մեկ ուսումնասիրելիս պարզապես զարմանում ես այն հիրավի անձնուրաց, խիզախ եւ նպատակասլաց գործունեությունից, որ բավական աննպաստ եւ բազում խոչընդոտներով լեցուն ժամանակներում ցուցաբերել են հայ մամուլի, գրի եւ գրականության համեստ մշակներն ու երեւելի գործիչները: Նրանք չեն ընկրկել ֆինանսական, նյութական եւ նույնիսկ ֆիզիկական սպառնալիքների ու մարտահրավերների առջեւ՝ անհավատալիորեն ծանր ու դժվարին հանգամանքներում շարունակելով իրենց գործն ու առաքելությունը: Հայ մամուլի բոլոր մշակների եւ երախտավորների սույն գործելակերպն ու վարվելակերպը հակիրճ պետք է ձեւակերպել որպես սխրանք ու սիրալից գործունեություն: Բազում զրկանքների, հոգեւոր եւ ֆիզիկական տառապանքների գնով նրանք ոչ միայն ապագայի հանդեպ հույս եւ հավատ էին սփռում, այլեւ ժողովրդական հոծ հատվածների հոգեւոր աշխարհում գեղարվեստական միտք, գեղագիտական ճաշակ եւ զգացողություններ էին ձեւավորում:

Եվ հաճախ հենց մամուլի էջերից էին արեւմտահայ ու արեւելահայ շինականները, ուսուցիչներն ու ծառայողները ծանոթանում գրական նոր ստեղծագործությունների՝ պատմվածքների, պոեմների, բանաստեղծությունների, գրականագիտական խոհագրությունների հետ: Մամուլը կրթում, ազնվացնում էր հայ մարդկանց միտքը ու ճաշակը, նրանց մղում ճշմարտացի եզրահանգումներ ու դասեր քաղելու ընթացող քաղաքական գործընթացներից եւ ազգային-ազատագրական պայքարից: Պարբերական մամուլը միշտ էլ հանդիսացել է հայ ժողովրդական զանգվածների ճշմարտացի լրատվության աղբյուրը, քաղաքական ու բարոյական համոզումների անխարդախ կողմնորոշիչը, գեղագիտական ու գեղարվեստական բարձր մտքերի եւ իդեալների սնուցիչը: Սույն գործառույթները հայ պարբերական մամուլի օրգանները կատարել են եւ՛ խաղաղ ու անվրդով ժամանակներում, եւ՛ պատերազմական ծանր իրավիճակներում: Հայ պարբերական մամուլի գոյության համար ամենակործանարարը եղավ առաջին համաշխարհային պատերազմը, որի բոցերի մեջ իր բնօրրանում ողջակիզվեց արեւմտահայությունը: Արեւմտահայ մամուլը ոչնչացավ իր ժողովրդի հետ միասին եւ ապա նույն այդ ժողովրդի բեկորների հետ փյունիկի նման վեր հառնեց մոխիրներից՝ օտար ափերում՝ հին եւ նոր գաղթավայրերում:

Ահա այս ամենի եւ բազում այլ հարցեր ու հարցադրումներ ծնող թեմաների ու գաղափարայնության շուրջն է կերտվել մամուլի պատմության ստվարածավալ՝ 786 էջ ընդգրկող կոթողային մտքի արգասիք սույն հատորը:

Ինչպես առաջաբանում գրում են հատորի պատասխանատու խմբագիրները՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ա. Խառատյանն ու պատմական գիտությունների դոկտոր Լ. Գեւորգյանը, հատորում ընդգրկվել են հիմնականում ամենակարեւոր պարբերականները (իսկ նշված ժամանակաշրջանում լույս տեսած պարբերականների թիվը հազարից ավելի է), որոնք լույս են տեսել արեւմտահայ ու արեւելահայ մշակութային կենտրոններում, ինչպես նաեւ սփյուռքում: Ըստ պատասխանատու խմբագիրների՝ կարճակյաց հրատարակությունները, «որոնք, թվում է, տեւական հասարակական նշանակություն չէին կարող ունենալ, բնութագրվում են տվյալ միջավայրի հայ ընթերցողի մտավոր պահանջմունքների մասին հնարավորին ընդարձակ պատկերացում տալու նպատակով»:

Պետք է հատուկ ընդգծել, որ հատորում կարելին եղածի չափով լայն է ներկայացված հայ մամուլի աշխարհագրությունը, իսկ ընդգրկված պարբերականների մեծագույն մասն ուսումնասիրվում է առաջին անգամ: Թերեւս որպես թերացում կարելի է մատնանշել այն հանգամանքը, որ հատորում չեն ընդգրկվել Հայ առաքելական եւ հարանվանությունների (հայ կաթոլիկներ եւ բողոքականներ) կրոնական-եկեղեցական հրատարակությունները, որոնք առհասարակ դուրս են մնացել հայ մամուլի հետազոտողների տեսադաշտից:

Հատորի հեղինակային կոլեկտիվում ընդգրկված են մի խումբ բազմավաստակ գիտնականներ՝ Ա. Խառատյան, Լ. Գեւորգյան, Մ. Մխիթարյան, Թ. Գալարյան, Հ. Աբրահամյան, Ս. Նազարյան, Պ. Մելիքյան, Օ. Փահլեւանյան, Գ. Խուդինյան, Մ. Հովսեփյան, Խ. Բարսեղյան, Ա. Հակոբյան: Սույն հատորը ստեղծվել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում եւ նախատեսված է ինչպես գիտական եւ ուսանողական, այնպես էլ հասարակայնության լայն շրջանների համար:

Վերջում հարկ ենք համարում շեշտել, որ այս կարգի մնայուն, կոթողային աշխատություններն անպայմանորեն պետք է ներկայացնել պետական բարձր պարգեւների:

Արմեն Կարապետյան
պատմական գիտ. թեկնածու

Լրացնելով Անդրանիկի մասին սպիտակ էջերը

Լրագրող- հրապարակախոս Ռուբեն Սիմոնյանը տարիներ ի վեր զբաղվել է Անդրանիկ զորավարի կյանքի ու գործի սակավ ուսումնասիրված էջերի լուսաբանմամբ: Նրա ժողոված նյութերը վերածվել են նաեւ գրքերի: «Անդրանիկ. սիբիրական վաշտի ոդիսականը» գիրքը, օրինակ, նվիրված է զորավար Անդրանիկի վերջին զորքի պատմությանը, որ 1918 թվականին կազմավորվել էր ռուս սպաների հրամանատարությամբ Սիբիրից ժամանած արեւմտահայ ռազմագերիների երթային վաշտի հիմքի վրա եւ իր ավանդն է բերել Հայաստանի Հանրապետության կայացման գործին: Հեղինակի հետ հանդիպում կայացավ Սյունիքի մարզային գրադարանի սպասարկման բաժնում: Մեր պատմագրության մեջ չասված կամ թերասված շատ էջեր կան, արխիվներում կան բազմաթիվ էջեր, որոնց դեռեւս մատ չի դիպել, դրանք պետք է ասպարեզ բերվեն, այս համոզմունք ունի Ռուբեն Սիմոնյանը:

-Վերջին տասնամյակներում մի տեսակ մոռացության է մատնված ազգային մեր ամենամեծ գործիչը՝ Անդրանիկը. ձգտել եմ փոքրիշատե լրացնել այդ բացը, երեք գրքեր եմ գրել Անդրանիկի մասին. առաջինը՝ «Անդրանիկ. սիբիրական վաշտի ոդիսականը», երկրորդը՝ «Անդրանիկ-150. մասունքներ» եւ երրորդը՝ «Андраник. Одиссея сибирской роты», որ հայկական գրքի տարբերակն է՝ սակայն էապես փոխված եւ լրամշակված, քանի որ հասցեագրված է Ռուսաստանում ապրող հայությանը եւ ռուս ընթերցողին ընդհանրապես, ինչը դրական ընդունելության է արժանացել: Ինձ համար ուշագրավն այն էր, որ 1918 թվականի թուրքական արշավանքի դաժան պայմաններում, երբ Սյունիքը Բաթումի պայմանագրով կցված էր Ադրբեջանին, Անդրանիկն իր զինվորների սրի ծայրով վերախմբագրում էր այդ պայմանագիրը: Բաթումի պայմանագրի 5-րդ կետով սահմանված էր, որ պետք է Անդրանիկը զինաթափվեր, նրա զորքը ցրվեր, եւ ինքը ռազմադաշտային դատարանին պիտի ենթարկվեր: Այս պայմաններում Անդրանիկը չի ենթարկվում եւ շարունակում է հայրենասիրական իր ծրագիրը:

Նաեւ ուշագրավ է, որ Սյունիքի պատկանելության համար սկսված պայքարը արժանապատվորեն շարունակեց բալկանյան պատերազմի ժամանակներից Անդրանիկի զինակից եղբայր Գարեգին Նժդեհը:

Ռուբեն Սիմոնյանն ուշագրավ շատ դրվագներ ներկայացրեց Անդրանիկի սյունիքյան արշավանքից: Վերջում հեղինակը տեղեկացրեց, որ տպագրության է պատրաստել եւս մի գիրք՝ «Օտարներն Անդրանիկի մասին»:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Վարուժան Գալստյանի բանաստեղծական խոհը

Մարդկային ցեղին ճակատագրով տրված անխուսափելի ճանապարհների մասին է Վարուժան Գալստյանի բանաստեղծական խոհը: Այլ խոսքով՝ գոյության բնական ընթացքն է այստեղ, ուր կարող ես հանդիպել իրականությունն առավել որոշակի դարձնող ձգտումների, ցանկությունների, խոստովանությունների, ընկալումների, սիրո, ափսոսանքի կամ բավականությունների: Եվ այդ ամենը հենց անհատին տրված ժամանակի երկունքն է ու նրա ընթացքը: Բանաստեղծական երեւակայությամբ, կամ իմաստախոհ շնորհներով օժտված շատերը խուսափում են խոսել ժամանակի սահմանավոր լինելու մասին: Իսկ այստեղ ռեալ իրականությունն է՝ «Երկնող ժամանակի հանգրվանը»:

Որտե՞ղ է, իսկապես, հանգրվանում ժամանակը: Հարցի պատասխանը գտնելու համար ահա արթնանում է Վարուժան Գալստյանի բանաստեղծական խոհը գոյության բնական ընթացքի մասին, ուր ավելորդ զգացմունքայնությունն իր տեղը զիջում է շոշափելի ու պատկերավոր մտածողությանը. ամեն ինչ որոշակի է դառնում տարիքային սահմանի ներսում, որի ընթացքն անխուսափելիորեն առաջ տանող, ապա կրկին ետ բերող ժամանակի ընթացք է: Այլ խոսքով՝ վերելք, որին հետեւում է վայրէջքը: Սա է Վարուժան Գալստյանի բանաստեղծական տողի ճշմարտությունը, եւ հենց սրա շուրջն է պտտվում այն ամենը, ինչ կոչվում է սեր ու բարություն, զարթոնք ու գարուն, ափսոսանք ու բավականություն... Միայն թե՝ ամեն ինչ դանդաղ ընթանա, միայն թե՝ կյանքը դանդաղ հեռանա: Այսպես է հոլովվում, արարվում կյանքի սերը: Այդ սերն էլ ստիպում է ամեն վայրկյան օրհնել վայրէջքի ուշացումը.

Տարիներն ինձ տանում են, ավաղ,
Գագաթը սարի,
Գագաթը, որին չեն ձգտում կամոք
Այլ հասնում են լուռ...

Հետաքրքիր է, թե այնտեղ՝ բարձրում,
Ում հետ կամ մենակ,
Ինչքան ժամանակ
Հոգնած կլսեմ աղոթքը լեռան՝
Ամեն մի վայրկյան սրտանց օրհնելով
Խենթ ուշացումը
Իմ մեծ վայրէջքի...

Չենք կարող ասել, թե բանաստեղծը չի տեսնում անսահմանի գոյությունը: Նա պարզապես ճշգրտում է նույնիսկ անսահմանի սահմանները՝ հավերժական շրջապտույտը եւս տեղավորելով մարդուն անխուսափելիորեն ու ճակատագրով տրված վերելքի ու վայրէջքի սահմաններում.

Երկնքի ափով
Կապույտը պատած,
Արփին է թեւում՝
Կրակը հագած...

Իրիկնաշաղին
Արեւը հոգնած
Երկինքը թողեց՝
Հորիզոն հեծած...

Երկնքի ափում
Գիշեր է պարզկա,
Աստղերը՝ արեւ-
Արեւը չկա...

Մարդն ամուր ոտքերով կանգնած է հողին: Այդ նա է նույն հողագնդի վրա երկրային ճշգրտումներով զգում ու պահում բոլոր գործողությունների մեջ ընթացող ժամանակի ռիթմը: Գարնան ծաղկունքից բարձրացող հրաշք բուրմունքը երկրային գործողություն է, որը ժամանակի ռիթմի մեջ է պահում սիրո զգացումը.

Գարնան ծաղկունքի բուրմունքը հրաշք
Ինձ կոչ է անում նորից սիրելու...

Որքան էլ որոշակիացված է ժամանակի ընթացքը Երկիր մոլորակի վրա, որի չափումներն անուններ ունեն՝ գարուն, ձմեռ, ձոր, լեռ ու, կամ՝ սրտով սիրած էակ, այնուամենայնիվ, այդ ամենը Տիեզերքի արարման արդյունք է, իսկ արարումն ինքն էլ սիրո արդյունք է: Ուստի սիրո մեջ մնալու երջանկությունը տիեզերական զգացողություն է.

Իմ քնքուշ էակ, ինձ մենակ մի թող,
Իմ սիրո ծովակ, դու ինձ մի լքիր.
Մեր սերը թող ինձ մնա հավիտյան՝
Որպես արարում մեծ տիեզերքի...

Այսպես, կյանքն իր բնական ընթացքի մեջ է, որտեղ ամեն ինչ իր չափման միավորը, պատճառն ու հետեւանքն ունի: Այնուամենայնիվ, կա մի սահման, մի հորիզոն, որի հաղթահարումը կնշանակի լուծել դարերի առաջադրած հանելուկը՝ գտնել ցանկության եւ բավարարվածության միության բանաձեւը: Ըստ Վարուժան Գալստյանի՝ անսահմանի տիրույթում է գործում մարդկային ցանկությունը, սակայն, միեւնույն ժամանակ, կա բանաձեւը՝ սահման գտնելու անսահմանի մեջ: Միայն թե այստեղ անզոր է մարդկային միտքը, որին փոխարինելու է գալիս որեւէ չափման մեջ չտեղավորվող Անհունի ողորմածությունը.

Իմ մեծ ցանկության
Եվ քո միշտ կանչող
Փախուստի միջեւ
Կա արգելակող մի անհայտ սահման,
Որը դարձել է բոսոր հորիզոն,
Հորիզոն, որի ցանկալի կողմը
Երբեք չի եղել ինձ տեսանելի...
Հորիզոն, որի մութ առեղծվածը
Չի լուծել նույնիսկ
Միտքը դարերի...
Ես՝ խենթս, հիմա անցնել եմ ուզում
Անանց սահմանն այդ հորիզոնի
Եվ համոզված եմ՝ միայն այս անգամ
Աստված ինձ համար թողություն կանի...

Այո, ժամանակն իր հանգրվաններն ունի, հանգրվանների անվերջ երթ է ժամանակի գոյությունը, եւ այդ երթի ամենագեղեցիկ հանգրվաններից է մարդ արարածին տրված ժամանակը՝ Երկիր մոլորակի վրա: Այստեղ է, որ որքան էլ գործում են ճշգրիտ չափումների օրենքները, միեւնույն է, անհունի «դաժան լռությունը» ստիպում է խոնարհվել նրա վեհության առջեւ.

Մեծ գիտնականները ինչքան էլ խորհեն՝
Մեր կյանքը գոյի վեհ առկայծում է.
Ու նրա մասին որքան էլ խոսեն,
Ժամանակի մեջ այն մոռացվում է...

Ֆիզիկոսներն ինչքան էլ փնտրեն
Լուրթ տիեզերքի սահմանը անհայտ-
Հավիտենության պահերը նորից
Նրանց կտանեն անսահմանության...

Թե տիեզերքը աստղերին դարեր
Պապանձ է թողնում երկնքում լազուր,
Անհունի դաժան լռության գրկում
Մեր կյանքի մասին խոսելն է իզուր...

Անորոշությունը որոշակի դարձնելու՝ Վարուժան Գալստյանի մարդկային մղումներն ու բանաստեղծական խոհը տանում են տարբեր չափումների միջեւ պատճառի ու հետեւանքի, տարատեսակ դրսեւորումների համեմատությունների միջոցով գտնելու գոյության ճշմարտությունը:

Հավատ՝ մարդու նկատմամբ: Մարդերգության հովանու ներքո ստեղծագործող բանաստեղծ է Վարուժան Գալստյանը, անհատին արժեւորող, Երկիր մոլորակի գոյությունը մարդով պայմանավորող ստեղծագործող:

«Երկնող ժամանակի հանգրվանների» մասին խոսող բանաստեղծը համոզված է՝

Ես կայի հնուց՝
Դեռ այն ժամանակ,
Երբ դեռ աշխարհում
Չկար ժամանակ...

Արեւը չկար,
Չկային աստղեր,
Տիեզերքն անհուն
Դատարկ էր- անտեր...

Լույսի ու բարության հետ հայտնված մարդը դարձավ աշխարհի տերը: Ամեն ինչ ճշգրիտ չափումների մեջ ընկալող բանաստեղծը, սակայն, տառապում է անորոշությունից.

Այս երկրում եղեմ,
Ինչեր կտեսնեմ՝
Ավաղ, չգիտեմ:

Այնուամենայնիվ, բանաստեղծի ցանկությունը մեկն է՝ թող մաքուր մնա մեծ ժամանակի մեր հանգրվանը:

Մարդկանց բնօրրան՝
Երկիր մոլորակ,
Ես քեզ մաղթում եմ
Բարու հաղթանակ...

Ֆելիքս Բախչինյան

Կավարտը պատասխան է նրանց, ովքեր շեփորահարում են պատասխանատու հանքարդյունաբերության մասին

էջ 4

շահագործածների անպատասխանատու գործելակերպի ու, իհարկե, պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների բարձիթողի վերաբերմունքի եւ անճարակության հետեւանքները:

2017-ին ԳԱԱ էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոնին Կավարտ գետի ջրի խնդրով դիմել էր ՀԲԵ-ն՝ հանձնելով նմուշ, որը վերցվել էր այդ տարվա մայիսին բացահանքից շուրջ 1 կմ ներքեւ ընկած հատվածում: Լաբորատոր հետազոտության արդյունքում պարզվել էր, որ ջրի թթվայնությունը շատ բարձր է, ինչն ապացուցում է բնապահպան ակտիվիստների մտահոգությունը, որ տեղի է ունենում հանքի թթվային դրենաժ, այսինքն՝ հանքի թթուները խառնվում են գրունտային ու մակերեւութային ջրերին՝ աղտոտելով դրանք: Հետազոտությամբ նաեւ ապացուցվել էր, որ Կավարտ գետում նորման գերազանցում են կադմիումը, նիկելը, կոբալտը, պղինձը, ցինկը, մանգանը, բարձր է ջրի կոշտությունը:

Այս ամենը, սակայն, վերաբերում է միայն ջրին, այնինչ բաց հանքի անտերության պատճառով տարիներ շարունակ աղտոտվում է օդը եւ հողը: Բավական է թեթեւ քամու ժամանակ գտնվել տեղանքում՝ զգալու համար, թե ինչպիսի գարշահոտ է տարածվում հատկապես Կավարտ եւ Լենհանքեր թաղամասերում: Ծանր մետաղները քամու միջոցով որպես փոշի տարածվում են նաեւ շրջակայքում, իսկ քանի որ Կավարտն ավելի բարձր դիրքում է, այդ փոշին հեշտությամբ հասնում է նաեւ Կապանի կենտրոն:

Ինչպես գրել էինք նախորդ հոդվածում, բաց հանքի հարեւանությամբ նաեւ մեքենաների «գերեզմանոց» կա: Սա անօրինական աղբավայր է, բայց տարիներ շարունակ քաղաքային իշխանությունները աչք են փակում իրողության վրա:

Ինչպես Կավարտը, այնպես էլ Շահումյանը, որին անդրադարձել ենք օրերս, իշխանության ամենաթողությամբ կատարված ու կատարվող թալանի օրինակ են, եւ երբ այսօր նույն իշխանության տարբեր մարմինների ու հանքերի շահագործողների կողմից խոսք է բացվում պատասխանատու հանքարդյունաբերության մասին, նրանց ընդամենը պետք է ցույց տալ Շահումյանն ու հատկապես Կավարտը:

hetq.am
3 մայիսի 2018թ.
Վահե Սարուխանյան

Կապանյան թիմի մրցակիցը լեհական «Լեխն» է

Հայաստանի գավաթակիր եւ բրոնզե մրցանակակիր «Գանձասար-Կապանը» Եվրալիգայի խաղարկության առաջին փուլում կմրցի լեհական Պոզնան քաղաքը ներկայացնող «Լեխի» հետ: Թիմի գլխավոր մարզիչ Աշոտ Բարսեղյանի կարծիքով՝ «Գանձասարին» հեշտ մրցակից բաժին չի ընկել: «**Հնարավոր տարբերակներից «Լեխն» ամենազորեղն է: Մենք պետք է պատրաստվենք ու խաղանք: Ամեն ինչ պիտի անենք արժանապատիվ խաղ ցույց տալու համար: Բոլոր տղաները պետք է գիտակցեն, որ անհնարին ոչինչ չկա: Հաղթողը խաղադաշտում է երեւում»,-** ասել է մարզիչը: Հունիսի երկրորդ կեսին «Գանձասար-Կապանը» ամառային նախապատրաստական հավաքն անցկացրեց Բուլղարիայում: Հավաքի ընթացքում «Գանձասար- Կապանը» նախատեսել էր երեք ստուգողական հանդիպում անցկացնել, ընդ որում՝ մեկը երկրի գավաթակիր Սոֆիայի «Սլավայի» հետ, որը նույնպես նախապատրաստվում է Եվրոպայի լիգայի մրցաշարին: Այդ խաղը դրամատիկ ավարտ ունեցավ: Երեք գնդակ խփելով եւ ունենալով երեք գոլի առավելություն՝ «Գանձասարը» չկարողացավ պահպանել հաղթական հաշիվը եւ արձանագրվեց ոչ ոքի՝ 3:3: Մյուս երկու խաղում կապանյան թիմը պարտություն կրեց:

Եվրալիգայի որակավորման փուլի հանդիպումները տեղի կունենան հուլիսի 12-ին Պոզնանում եւ 19-ին՝ Երեւանում:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Մշակութային քաղաք Գորիսը մշակութային ժառանգությունը վերականգնելու եւս մեկ հնարավորություն բաց թողեց

էջ 1

ցուցահանդեսների բացում, Գորիսին եւ նշանավոր գորիսեցիներին նվիրված հրատարակություններ, թանգարանային միջոցառումների կազմակերպում, ալբոմների, տեղեկատվական նյութերի հրատարակում, ԱՊՀ երկրներից հրավիրված պարային խմբերի համերգներ եւ այլն: Այդ օրերին Գորիսի հրապարակում կբացվեն գրախանութ-սրճարանը եւ քանդակների այգին: ԱՊՀ երկրների 10-ից ավելի քանդակագործներ մեկ ամիս առաջ ժամանելու են Գորիս՝ տեղում «Կախարդական ժայռերի քաղաքը» քանդակելու համար:

Միջոցառումները հիմնականում ֆինանսավորվելու են պետբյուջեից, իսկ ԱՊՀ հումանիտար ֆոնդը ֆինանսավորելու է 250 հյուրերի ժամանելու եւ կեցության հետ կապված ծախսերը: Ծրագրի իրականացման միջգերատեսչական հանձնաժողովը դեռեւս չի հաստատել միջոցառումների ցանկը, հետեւաբար պարզ չէ, թե ներկայացվածներից որոնք կֆինանսավորվեն: Մեզ առավելապես հետաքրքրում է «Գորիսը՝ 2018թ. ԱՊՀ մշակութային մայրաքաղաք» ծրագրի շրջանակում Գորիսի համայնքապետարանի ներկայացրած ցանկը՝ 36 առաջարկ, որում ժամանցային միջոցառումներից բացի, ներառված են պատմամշակութային ժառանգության վերականգնմանն առնչվող ծրագրեր:

Մշակութային մայրաքաղաք ճանաչելու համար Գորիսի ընտրությունը պայմանավորված է եղել նրա ունեցած պատմամշակութային արժեքներով: Գորիս ժամանող օտարերկրյա հյուրերին, բնականաբար, ամենահետաքրքրողը քաղաքի պատմական միջավայրն է լինելու, եւ այդ արժեքների նկատմամբ պետության ունեցած վերաբերմունքը: Նկատի ունենալով, որ «Գորիսը՝ 2018թ. ԱՊՀ մշակութային մայրաքաղաք» հռչակելու հիմնական նպատակը, ինչպես հայտարարում է նախարարությունը, քաղաքի մշակութային արժեքները ներկայացնելն է, ուրեմն դրանք առանձնակի ուշադրության պետք է արժանանային:

Սակայն, վերջին տարիներին կատարված բոլոր ուսումնասիրություններում մասնագետները նշում են, որ Հին Գորիս արգելավայրը լքված է, հետզհետե քայքայվում ու քանդվում է: Անհրաժեշտ է կատարել պեղման եւ մաքրման աշխատանքներ Հին Գորիսի քարանձավային արգելավայրում, վերականգնել եւ վերօգտագործել բնակելի տները: Վարարակ գետի վրա վերականգնել եւ կառուցել նոր կամուրջներ՝ վերականգնելով կապը «Գորիս» արգելավայրի եւ քաղաքի միջեւ:

Համայնքապետարանը տարվա մշակութային միջոցառումների ցանկում նախատեսում է պարբերաբար թատերական նեկայացումներ կազմակերպել «Ամֆիթատրոնում», ցուցադրություններ՝ Գորիսի երկրագիտական թանգարանում, որի համար նախատեսել է ներկայանալի տեսքի բերել թանգարանը, ընդլայնել տարածքը, կամ՝ տեղափոխել նախկին տարածք (Մաշտոցի 3 հասցե), բարեկարգել Հին Գորիսի քարանձավների շրջակայքը:

Ժամանակի առումով, թերեւս, հնարավոր է, մինչեւ բացման արարողությունը՝ հուլիսի 7-ը, երկրագիտական թանգարանի հետ կապված տեխնիկական խնդիրները կարգավորել, որոշ չափով բարեկարգել Հին Գորիսի քարանձավների շրջակայքը: Սակայն, մեծ ցանկության դեպքում անգամ, ժամանակը բավարար չէ Հին Գորիսում պահպանված քարանձավային թատրոնը, որին տեղաբնակները «Ամֆիթատրոն» են անվանում, վերականգնելու եւ թատերական ներկայացումներ կազմակերպելու համար: Ամֆիթատրոնի բեմը, նստատեղերը եւ հարդասենյակները պահպանվել են (ենթադրվում է, որ Գորիսի թատրոնը հարյուրամյակների պատմություն ունի), սակայն, մասնագետները բազմիցս ազդարարել են, որ այն վտանգված է, եւ վերականգնողական աշխատանքներ են անհրաժեշտ, հակառակ դեպքում մարդկանց մեծ հոսքն այնտեղ վտանգավոր է:

Հին Գորիսի ամֆիթատրոնը՝ դրսից եւ ներսից

Գորիսի երկրագիտական թանգարանը Սյունիքի մարզում ստեղծված առաջին թանգարանն է, բայց, թերեւս, ամենավատթար պայմաններում գտնվողը: Այն հիմնադրվել է 1940-ական թվականներին: Սկզբնապես գործել է եկեղեցում, իսկ այժմ՝ մշակույթի տան հարմարեցված տարածքում: Շենքն, ընդհանուր առմամբ, թանգարանի կարիքներին չի համապատասխանում՝ չունի օդափոխության, ջեռուցման եւ անվտանգության համակարգ: Թանգարանում պահպանվում է 5000-ից ավելի ցուցանմուշ, սակայն շենքային պայմանները բավականաչափ հարուստ թանգարանային նմուշներն ամբողջությամբ ցուցադրելու հնարավորութուն չեն ընձեռում, թանգարանն անգամ ներառված չէ զբոսաշրջային տուրերում:

Թանգարանը համայնքային ենթակայության կառույց է, եւ Ֆինանսական միջոցներ չտրամադրելու պատճառով վերջին տարիներին չի համալրվել նոր ցուցանմուշներով: Նորընտիր համայնքապետին կհաջողվի՞ այս կարճ ժամանակամիջոցում ներկայանալի տեսքի բերել շինությունը, գիտական մակարդակով ներկայացնել ցուցադրությունները, ցուցանմուշների մոդեռնացված, թարգմանված ցուցադրություն ապահովել եւ այլն: Սակայն, բոլոր միջոցառումներից սա է ամենակարեւորը, այստեղ կենտրոնացված մշակութային արժեքներն են օտարերկրացուն պատկերացում տալու Սյունյաց աշխարհի պատմության, մշակույթի, ավանդույթների եւ կենցաղավարության մասին:

«Գորիս» արգելավայրը հանդիսանում է քարայր-կացարաններով միջնադարյան բացառիկ հուշարձան, սակայն այն գտնվում է բավականին վտանգված վիճակում (որոշ քարայրեր փլուզման եզրին են): 2001թ. երբ Կառավարության որոշումով Գորիսը հայտարարվեց զբոսաշրջային կենտրոն, դրանից հետո մի քանի ուսումնասիրություն իրականացվեց պատմական Գորիսը վերականգնելու նպատակով: Մշակույթի նախարարության «Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն» ՊՈԱԿ-ը մշակեց «Գորիս քաղաքի պատմամշակութային հիմնավորման նախագծի եւ քաղաքի պատմական տարածքի, նրա առանձին հատվածների վերակառուցման եւ օգտագործման հայեցակարգը»:

Համաշխարհային բանկի հետ համատեղ իրականացվող «Տեղական տնտեսության եւ զբոսաշրջության ենթակառուցվածքի զարգացման» ծրագրի շրջանակներում մշակվել է Գորիս քաղաքի կենտրոնական մասի պատմաճարտարապետական միջավայրի վերականգնման նախագիծը:

Եվրոպայի միության եւ Եվրոպայի խորհրդի համաֆինանսավորումով ճարտարապետներն իրականացրել են «Հին Գորիս քարանձավային բնակավայրի վերականգնում նախնական տեխնիկական գնահատում» Հին Գորիս պատմամշակութային արգելոցի, հանրապետական նշանակության հուշարձանի վերականգնելու նպատակով: Միաժամանակ նշվում է, որ Հին Գորիսի վերականգնումն ու վերաօգտագործումը երկարաժամկետ ծրագիր է: Այն պետք է իրականացնել փուլերով:

2015թ. Գորիսը դարձել է «Համաշխարհային պատմական ժառանգության քաղաքներ» կազմակերպության անդամ:

Սակայն, մինչ օրս, Կառավարությունը աշխատանքներ չի տարել պետական նշանակության այս հուշարձանի վերականգնման ուղղությամբ: Գորիսի համայնքապետարանի նախաձեռնությամբ, պետական սեփականություն համարվող «Գորիս» արգելավայրում վերականգնվել են միայն Սբ Հռիփսիմե եկեղեցին եւ դրան կից երկու քարայրերը: Աշխատանքներն իրականացվել են «Գորիս-Վիեն» քույր քաղաքների համագործակցության շրջանակում, Փարիզում ֆրանսահայերի հիմնադրած «Երկիր եւ մշակույթ» կազմակերպության ֆինանսավորումով: 2009 թ.-ից սկսված աշխատանքներն ավարտվել են 2017թ., որից հետո վերականգնողները նախաձեռնել են Սբ Հռիփսիմե եկեղեցուց մոտ 70 մ հեռավորության վրա գտնվող Մելիք Օհանի ապարանքի վերականգնումը:

Վերականգնված Սբ Հռիփսիմե եկեղեցին եւ քարայրերը

2016թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի արշավախումբը պեղումներ է կատարել այստեղ: Վերականգնող ճարտարապետ Ստեփան Նալբանդյանը հայտնեց, որ գումար չի հատկացվել ապարանքը վերականգնելու համար, պեղումներից հետո իրենք ժամանակավոր ամրակայման աշխատանքներ են կատարել ու այդպես թողել: Ճարտարապետի ասելով՝ Մելիք Օհանի ապարանքը կարելի է բերել մոտավորապես այնպիսի տեսքի, ինչպիսին եղել է նախկինում եւ վերածել ազգագրական թանգարանի կամ ցուցասրահի: Պրն Նալբանդյանի կարծիքով՝ Մելիք Օհանի ապարանքի օրինակով կարող են պատկերացում կազմել այն ժամանակվա վերնախավի կենցաղին եւ ապրելակերպին առնչվող որոշ հարցերի մասին:

Մելիք Օհանի ապարանքը

Մշակույթի նախարարությունը հաստատել է Գորիսի պաշտպանության գոտու հատակագիծը, որը ներառում է Գորիս քաղաքի հիմնական կենտրոնական հատվածը: Քաղաքի պատմության եւ մշակութային հուշարձանների պաշտոնական ցանկում ներառված են Սուրբ Հռիփսիմե եկեղեցին, Մելիքի եկեղեցին, 52 բնակավայրային քարանձավները, ամֆիթատրոնը, քարվանսարան, բնակելի ժայռապատ բլուրը, Ջագեձորի բերդը, նավթամղիչ կայանը, ձիթհանները, բրուտանոցները, հին գերեզմանատունը, բազմաթիվ տապանաքարեր ու խաչքարեր:

Գորիսը քաղաք է համարվել 1885 թ.-ին: Այդ շրջանում քաղաքում արդեն կառուցված էր 55 բնակելի տուն, գործում էր 124 խանութ: Գորիսից արտահանվել է տեղական արտադրության ապրանքների՝ բրդի, կաշվի, բոժոժի, գորգերի զգալի մասը: Պահպանվել է ձիթհանը, բրուտանոցը, որոնք տեղաբնակների զբաղմունքի ու կենցաղավարության մասին պատմող եզակի նմուշներ են եւ հետաքրքրական կարող են լինել քաղաքի այցելուների համար: Միջոցառումների ցանկից դուրս է մնացել արհեստների ունեցած դերը Հին Գորիսում: Մինչդեռ սրանք են Գորիսի մնայուն արժեքները, սրանք պետք է պահպանի ու հանրահռչակի մշակույթի նախարարությունը:

Սառա Պետրոսյան

Գորիսը՝ 2018 թ. ԱՊՀ մշակութային մայրաքաղաք ծրագրի բացում-փիփղոսի փոխանցում (հուլիսի 7-ի եւ 8-ի ծրագիրը)

07.07.2018

10:00 «Զանգեր» հուշարձանի բացման արարողություն
10:30 ArtExpo ծրագրի պաշտոնական բացում/արհեստագործության եւ ձեռարվեստի ցուցադրություն-տոնավաճառ
12:00 Մամուլի ասուլիս/ ծրագրի շնորհանդես
14:30 Սրճարան-գրախանութի բացում/ հանդիպում գրողների հետ
16:00 Թթի փառատոն
21:00 Տիտղոսի հանդիսավոր փոխանցում/ելույթներ
21:30 Համերգային ծրագիր / ԱՊՀ սիմֆոնիկ նվագախմբի համերգ
23:00 ԱՊՀ երկրների DJ fest /ԱՊՀ հայտնի DJ-ները բացօթյա կներկայացնեն իրենց երկրներում ամենանոր եւ հիթային ստեղծագործությունները/

08.07.2018

11:00 «Հին Գորիս» ալբոմի շնորհանդես եւ ԱՊՀ ազգային պարերի բացօթյա ֆլեշմոբ ArtExpo տաղավարներում
14:30 Ս.Խանզադյանի նոր թանգարանում հանդիպում ԱՊՀ մտավորականների հետ
16:00 Հին Գորիս՝ ձեռագործության փառատոն
18:00 Գորիսի տոն / Գորիսի ազգային ուտեստների հյուրասիրություն/փառատոն/
20:30 ԱՊՀ երկրների էստրադային-ջազային երաժշտության փառատոն՝ նվիրված Կոնստանտին Օրբելյանի ծննդյան 90-ամյակին

Սյունյաց երկիր

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր՝ ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռ.՝ (0285) 5 25 63, (091) 45 90 47, (077) 45 90 47:
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
էլ.կայք՝ www.syuniacyerkir.am

® նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231: Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2: Պետական աջակցություն՝ տարեկան 500000 ՀՀ դրամ:

«ԳՈՎԱԶԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

QR-ԿՈԴ

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ: Տպաքանակը՝ 1200, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 03.07.2018թ.: